

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ
Հ Ր Ա Մ Ա Ն

«30» մայիսի 2014թ.

N 87-Ա

ք. Ստեփանակերտ

ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՏԱՐՎԱ ԳՈՒՅՔԻ,
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ,
ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԱՄՈՒՍՆՈՒՆ, ՆՐԱ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ
ԱՊՐՈՂ ԾՆՈՂԻՆ, ՀԱՄԱՏԵՂ ԱՊՐՈՂ ՉԱՓԱՀԱՍ ԵՎ ՉԱՄՈՒՍՆԱՑԱԾ ԶԱՎԱԿԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԱՐԿԱՅԻՆ ՏԱՐՎԱ ԳՈՒՅՔԻ ԵՎ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԵՎ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ԿԱՄ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՕՐՎԱ ԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԿԱ
ԳՈՒՅՔԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ
ԼՐԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության
2004 թվականի մարտի 16-ի N 74 որոշմամբ հաստատված կանոնադրության 29-րդ
կետի «գ» ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել՝

1) բարձրաստիճան պաշտոնատար անձի հարկային տարվա գույքի,
եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրի լրացման ուղեցույցը՝
համաձայն N 1 հավելվածի.

2) բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնուն, նրա հետ համատեղ
ապրող ծնողին, համատեղ չափահաս և չամուսնացած զավակին սեփականության
իրավունքով պատկանող հարկային տարվա գույքի և եկամուտների հայտարարագրի
լրացման ուղեցույցը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) բարձրաստիճան պաշտոնատար անձի պաշտոնական պարտականությունները
ստանձնելու կամ պաշտոնական պարտականությունները դադարեցնելու օրվա

դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրի
լրացման ուղեցույցը՝ համաձայն N 3 հավելվածի:

հ/ծ 1-ին դասի պետական խորհրդական

Ա. ԲԱԼԱՅԱՆ

ՈՒ Ղ Ե Ց ՈՒ Յ Ց
**ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՏԱՐՎԱ ԳՈՒՅՔԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ
ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԼՐԱՑՄԱՆ
ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԼՐԱՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱԳՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**
Ընդհանուր դրույթներ

1. Սույն ուղեցույցը սահմանում է բարձրաստիճան պաշտոնատար անձի համապատասխան հարկային տարվա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրի (այսուհետ՝ Հայտարարագիր) լրացման նկատմամբ ներկայացվող պահանջները և ներկայացման կարգը:

2. Հայտարարագրի ներկայացման պարտականությունը բխում է «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ԼՂՀ օրենքի 3-րդ և 4-րդ հոդվածների պահանջներից:

3. Հայտարարագիրը ներկայացնում են «Հանրային ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով սահմանված հետևյալ բարձրաստիճան պաշտոնատար անձինք՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահը, վարչապետը, փոխվարչապետը, Ազգային ժողովի պատգամավորները, դատավորները, նախարարները և նրանց տեղակալները, գլխավոր դատախազը և նրա տեղակալները, շրջանների և Ստեփանակերտ քաղաքի դատախազները, օրենքներով ստեղծված պետական մարմինների ղեկավարները, նրանց տեղակալները և այդ մարմինների անդամները, կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների ղեկավարները, նրանց տեղակալները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի գլխավոր հարկադիր կատարողը և նրա տեղակալները, վերահսկիչ պալատի նախագահը, նրա տեղակալը, խորհրդի անդամները, մարդու իրավունքների պաշտպանը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարը և նրա տեղակալները, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը, կառավարության աշխատակազմի ղեկավարը և նրա տեղակալները, Ստեփանակերտի քաղաքապետը և նրա տեղակալները, շրջանների վարչակազմերի ղեկավարները և նրանց տեղակալները, օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարները, անվտանգության խորհրդի քարտուղարը և նրա տեղակալները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի խորհրդականները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի հատուկ հանձնարարությունների գծով ներկայացուցիչները, խորհրդատուն և օգնականները, Ազգային ժողովի նախագահի խորհրդականները և օգնականները, վարչապետի խորհրդականները և օգնականները, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայության ղեկավարը, վարչապետի վերահսկողական ծառայության ղեկավարը, Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչը:

3. Հայտարարագիրը լրացվում է ԼՂՀ կառավարության 2014 թվականի մայիսի 22-ի N 314-Ն որոշման պահանջներին համապատասխան:

4. Հայտարարագիրը լրացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել բարձրաստիճան պաշտոնատար անձանց՝ հարկային տարվա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրի լրացման սույն ուղեցույցով:

5. Բարձրաստիճան պաշտոնատար անձի հարկային տարվա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագիր լրացնելիս անհրաժեշտ է նշել այն հարկային տարին արտահայտող տարեթիվը, որի համար լրացվում է գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագիրը:

Բարձրաստիճան պաշտոնատար անձի տվյալները

6. **Հայտարարագրի «Բարձրաստիճան պաշտոնատար անձի տվյալները»** աղյուսակի՝

- **«Հայտարարատուի ազգանունը, անունը, հայրանունը»** տողում լրացվում է հայտարարատուի ազգանունը, անունը, հայրանունը՝ ըստ անձնագրի:
- **«Զբաղեցրած պաշտոնը»** տողում լրացվում է համապատասխան իրավական ակտով սահմանված պաշտոնի ամբողջական անվանումը՝ ներառելով պետական մարմնի անվանումը:
- **«Պաշտոնը ստանձնելու տարեթիվը»** տողում նշվում է այն օրը ամիսն ու տարեթիվը երբ բարձրաստիճան պաշտոնատար անձը ստանձնել է պաշտոնը:
- **«Անձնագրի սերիան, համարը, տրման ամսաթիվը, ում կողմից է տրված»** տողում լրացվում են հայտարարատուի անձնագրի պահանջվող տվյալները:
 - **«Հաշվառման հասցեն»** տողում լրացվում է հայտարարատուի հաշվառման հասցեն՝ ըստ անձնագրում կատարված համապատասխան գրառման:
 - **«Բնակության հասցեն»** տողում լրացվում է հայտարարատուի հիմնական բնակության հասցեն՝ հաշվառման հասցեից տարբերվելու դեպքում:
 - Հասցեն լրացնելիս անհրաժեշտ է նշել երկիրը, շրջանը, մարզը կամ այլ վարչատարածքային միավորը, քաղաքը, համայնքը (գյուղը կամ այլ բնակավայրը), փոստային ինդեքսը, փողոցը, տունը, շենքը և բնակարանը:
 - **«Հեռախոսահամարները, էլեկտրոնային փոստի հասցեն»** տողում լրացվում են հայտարարատուի այն հեռախոսների կոդերը և համարները, (աշխատանքային, ծառայողական), ինչպես նաև էլ-փոստի հասցեն, որոնցով հնարավոր է կապ հաստատել հայտարարատուի հետ:
 - **«Հայտարարագիրը ներկայացնելու օրը, ամիսը, տարեթիվը»** վանդակները լրացվում են հայտարարագրի ներկայացման ամսաթվին համապատասխան:

Բաժին Ա. Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձինք

7. Հայտարարագրի այս բաժնում լրացվում են բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ տվյալները: Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ

փոխկապակցված անձանց շրջանակը ներառում է «Հանրային ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով սահմանված, բարձրաստիճան պաշտոնատար անձի կամ նրա ամուսնու հետ՝ ներառյալ մինչև 2-րդ աստիճանի արյունակցական կապի մեջ գտնվող փոխկապակցված անձանց:

8. **«Ա.1. Բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսինը, նրա հետ համատեղ ապրող ծնողը, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակները»** աղյուսակի՝

- **«Ազգանունը, անունը, հայրանունը»** սյունակի համապատասխան տողերում լրացվում է բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու, նրա հետ համատեղ ապրող ծնողի, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակի ազգանունը, անունը, հայրանունը:
- **«Ծննդյան ամսաթիվը»** սյունակի համապատասխան տողերում լրացվում է բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու, նրա հետ համատեղ ապրող ծնողի, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակի ծննդյան օրը, ամիսը և տարեթիվը:

9. **«Ա2. Բարձրաստիճան պաշտոնատար անձի կամ նրա ամուսնու հետ՝ ներառյալ մինչև 2-րդ աստիճանի արյունակցական կապի մեջ գտնվող պաշտոն զբաղեցնող փոխկապակցված անձինք»** աղյուսակը լրացվում է «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ԼՂՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան: Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված և պաշտոն զբաղեցնող անձանց ցանկը տրված է Աղյուսակ 1-ում: Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված և պաշտոն զբաղեցնող անձանց ցանկը չի ներառում համապատասխան մարմնում **տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնները**: Տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց ցանկը սահմանվում է համապատասխան մարմնի հաստիքացուցակով:

10. **«Ա2. Բարձրաստիճան պաշտոնատար անձի կամ նրա ամուսնու հետ՝ ներառյալ մինչև 2-րդ աստիճանի արյունակցական կապի մեջ գտնվող պաշտոն զբաղեցնող փոխկապակցված անձինք»** աղյուսակի՝

- **«Զբաղեցրած պաշտոնը»** սյունակի վանդակներում նշվում է բարձրաստիճան պաշտոնատար անձի կամ նրա ամուսնու հետ՝ ներառյալ մինչև 2-րդ աստիճանի արյունակցական կապի մեջ գտնվող ազգակցի պաշտոնի անվանումը, որը համապատասխանում է Աղյուսակ 1-ում նշված պաշտոնյաների համար սահմանված ցանկին: **«Կազմակերպությունը»** վանդակում անհրաժեշտ է նշել այն պետական մարմնի անվանումը, ինչպես նաև պետական մարմնի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը, որտեղ նա պաշտոն է զբաղեցնում:
- **Նախարարների և նրանց տեղակալների համար «նախարարության համակարգի պաշտոնները» ներառում են** նախարարի, նախարարի տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարի, օգնականների և ռեֆերենտների, նախարարության **աշխատակազմի, տարածքային ստորաբաժանումների**, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմինների, նախարարության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև նախարարության կազմում գործող պետական հիմնարկների պաշտոնները:
- **Օրենքներով ստեղծված կոլեգիալ պետական մարմնի կողմից կարգավորվող ոլորտում**

գործող առևտրային կազմակերպությունների ղեկավար պաշտոններ են համարվում առևտրային կազմակերպության գործադիր մարմնի անդամների, ինչպես նաև առևտրային կազմակերպության խորհրդի անդամների պաշտոնները:

- **«Ազգակցական կապը»** սյունակում նշվում է բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ ունեցած ազգակցական կապը: Բարձրաստիճան պաշտոնատար անձի և նրա ամուսնու արյունակցական կապի 1-ին աստիճանի փոխկապակցված անձինք են **զավակները, ծնողները, քույրերը և եղբայրները**: Բարձրաստիճան պաշտոնատար անձի և նրա ամուսնու հետ արյունակցական կապի մինչև 2-րդ աստիճանի մեջ գտնվող փոխկապակցված անձինք են **բարձրաստիճան պաշտոնատար անձի և նրա ամուսնու թոռները, հորեղբայրները, հորաքույրերը, մորաքույրերը, մորեղբայրները, քրոջ զավակները, եղբոր զավակները**:
- **«Ազգանունը, անունը, հայրանունը»** սյունակում համապատասխանաբար նշվում է բարձրաստիճան պաշտոնատար անձի ազգակցի ազգանունը, անունը և հայրանունը:
- Եթե բարձրաստիճան պաշտոնատար անձը կորցրել է կապը որևէ փոխկապակցված անձի հետ և տեղեկատվության բացակայության պատճառով ի վիճակի չէ հայտարարագրելու նրանց որպես փոխկապակցված անձ, ապա նա հայտարարագրի սույն աղյուսակի **«Ազգակցական կապը»** և **«Ազգանունը, անունը, հայրանունը»** սյունակներում նշում է փոխկապակցված անձի ազգակցական կապը և անձի անունը, հայրանունը, ազգանունը՝ դատարկ թողնելով **«Զբաղեցրած պաշտոնը»** սյունակի համապատասխան վանդակը:

Բաժին Բ. Բարձրաստիճան պաշտոնատար անձի գույքը

11. Հայտարարագրի **«Բ. Բարձրաստիճան պաշտոնատար անձի գույքը»** բաժնում ներկայացվում են բարձրաստիճան պաշտոնատար անձին ԼՂՀ-ում և արտերկրում սեփականության իրավունքով պատկանող գույքի վերաբերյալ տվյալներ, որը օտարվել կամ ձեռք է բերվել հարկային տարում:

12. Ընդհանուր համատեղ կամ բաժնային սեփականության իրավունքով պատկանող գույք ունենալու դեպքում՝ բարձրաստիճան պաշտոնատար անձը **«Բ1. Բարձրաստիճան պաշտոնատար անձի գույքը»** բաժնի համապատասխան աղյուսակների **«Սեփականության տեսակը»** վանդակում նշվում է նաև «համատեղ սեփականություն» կամ «բաժնային սեփականություն» բառերը:

13. Նվիրատվության կամ ժառանգության կարգով ստացված գույքի դեպքում **«հարկային տարում ձեռքբերված»** կամ **«հարկային տարում օտարված» «գույքի (գինը) արժեքը»** սյունակների համապատասխան տողում, գույքի գինը արտացոլվում է Հայաստանի Հանրապետության դրամով՝ հաշվարկված գույքի գների (արժեքի) ներքոշարադրյալ մեթոդներով:

- Բնամթերային գույքը կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից ստանալու դեպքում հայտարարագրում դրանք արտացոլվում են կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից **այլ անձանց՝ դրանց իրացման միջին գներով**, իսկ այդպիսի գների բացակայության դեպքում՝ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ մոտ

դրանց ինքնարժեքի (կամ ձեռքբերման արժեքի) և դրա նկատմամբ օրենքով սահմանված դեպքերում անուղղակի հարկերի հանրագումարով:

- Այլ աղբյուրներից ստանալու դեպքում՝ հայտարարագրում գույքի գինը արտացոլվում է նույնանման գործարքների տվյալ ամսվա **հրապարակված վիճակագրական գներով** (անհնարինության դեպքում նախորդող ամսվա հրապարակված վիճակագրական միջին գներ), իսկ դրանց բացակայության դեպքում՝ այդպիսի կամ նույնանման գործարքների համար՝ նախորդող 12 ամսվան վերաբերող հրապարակված վիճակագրական միջին գներով (սակագներով):
- Վիճակագրական միջին գնի բացակայության դեպքում գույքի գինը հայտարարագրում արտացոլվում է **եկամտի ստացման կամ պահանջի իրավունքի առաջացման տարում այն ձեռք բերելու գնով**, որը նման հանգամանքներում սովորաբար գանձվում է նույնանման ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների դիմաց: Այդ նպատակով կարող են կիրառվել առքուվաճառքով զբաղվող սուբյեկտների (բրոքերների, մասնագիտացված խանութների, բորսաների, մասնագիտացված տոնավաճառների, շուկաների և այլն) գները (սակագները), գնացուցակային (կատալոգային) գները, այդ թվում՝ նաև համապատասխան դեպքերում համացանցի միջոցով ստացված տվյալները, ինչպես նաև նույնանման գույքի աճուրդային կարգով իրացման ձևավորված նախադեպային տվյալները:

14. Հայտարարագրի «**Բ1. Անշարժ գույքը**» աղյուսակի՝

- «**Տեսակը**» սյունակի համապատասխան տողում լրացվում է բարձրաստիճան պաշտոնատար անձին սեփականության իրավունքով պատկանող այն անշարժ գույքը՝ հողամասը, ընդերքի մասը, մեկուսի ջրային օբյեկտը, անտառը, բազմամյա տնկին, շենքը, շինությունը, հողին ամրակայված այլ գույքը, որն օտարվել կամ ձեռք է բերվել հարկային տարում՝ համաձայն կից Աղյուսակ 2-ի:

Անշարժ գույքի ամեն մի տեսակի համար լրացվում է անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականով սահմանված գույքային միավորը:

- «**Գտնվելու վայրի հասցեն**» սյունակի համապատասխան տողում լրացվում է հայտարարագրման ենթակա անշարժ գույքի լրիվ հասցեն:

Հասցեն լրացնելիս անհրաժեշտ է նշել անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականում նշված հասցեն:

- «**Ձեռք է բերվել հարկային տարում**» սյունակի «**Գինը (արժեքը)**» հատվածի համապատասխան տողում նշվում է տվյալ հարկային տարվա ընթացքում ձեռք բերված յուրաքանչյուր միավոր անշարժ գույքի արժեքը՝ ըստ անշարժ գույքի ձեռքբերման պայմանագրում արտացոլված գնի:
- «**Արժույթը**» սյունակի համապատասխան տողում նշվում է արժույթի անվանումը:
- «**Օտարվել է հարկային տարում**» սյունակի «**Գինը (արժեքը)**» հատվածի համապատասխան տողում նշվում է տվյալ հարկային տարվա ընթացքում օտարված անշարժ գույքի արժեքը:

15. Հայտարարագրի «**Բ2. Շարժական գույքը**» աղյուսակի՝

- «**Տեսակը**» սյունակի յուրաքանչյուր տողում լրացվում է այն շարժական գույքի տեսակը՝ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը, անիվավոր, թրթուրավոր, ինքնագնաց մեքենան կամ մեխանիզմը, օդային, ջրային փոխադրամիջոցը, որն օտարվել կամ ձեռք է բերվել

հարկային տարում՝ համաձայն կից Աղյուսակ 3-ի:

- Ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների շարքին են դասվում այն տրանսպորտային միջոցները, որոնց շարժիչների աշխատանքային ծավալը գերազանցում է 50 խոր. սանտիմետրը, իսկ առավելագույն արագությունը գերազանցում է 50 կմ/ժամը, ինչպես նաև տարբեր բեռնատարողությամբ կցորդները կամ կիսակցորդները:
- **«Սերիան, մակնիշը»** սյունակի համապատասխան տողերում լրացվում է հայտարարագրման ենթակա շարժական գույքի սերիան և մակնիշը, այդ թվում՝ թողարկման տարեթիվը: Մակնիշը և սերիան լրացվում է շարժական գույքի տեխնիկական փաստաթղթերում արտացոլված լեզվով:
- **«Արժույթը»** սյունակի համապատասխան տողում նշվում է արժույթի անվանումը:
- **«ձեռք է բերվել հարկային տարում»** սյունակի **«Գինը (արժեքը)»** հատվածի համապատասխան տողում նշվում է տվյալ հարկային տարվա ընթացքում ձեռք բերված յուրաքանչյուր միավոր շարժական գույքի արժեքը՝ ըստ գույքի ձեռքբերման պայմանագրում արտացոլված գնի:
- **«Օտարվել է հարկային տարում»** սյունակի **«Գինը (արժեքը)»** հատվածի համապատասխան տողում նշվում է տվյալ հարկային տարվա ընթացքում օտարված շարժական գույքի արժեքը:

16. Հայտարարագրի «**Բ3. Արժեթղթերը և այլ ներդրումներ**» աղյուսակի՝

- **«Տեսակը»** սյունակի յուրաքանչյուր տողում լրացվում է այն արժեթղթի տեսակը (պարտատոմսը, չեկը, մուրհակը, բաժնետոմսը և Հայաստանի Հանրապետության օրենքներով արժեթղթերի թվին դասվող այլ փաստաթուղթը, բացառությամբ բանկային վկայագրի) և (կամ) այլ ներդրումը հավաստող փաստաթուղթը (բաժնեմասը, փայաբաժինը), որը օտարվել կամ ձեռք է բերվել հարկային տարում՝ համաձայն կից Աղյուսակ 4-ի:
Սյունակի յուրաքանչյուր տողում փակագծերում նշվում է նաև համապատասխան արժեթուղթը թողարկողի անվանումը կամ ազգանունը, անունը, հայրանունը, ինչպես նաև արժեթղթի ծածկագիրը (առկայության դեպքում): Օտարերկրյա արժեթղթերի դեպքում ավելացվում է նաև «օտարերկրյա» բառը:
- **«Արժույթը»** սյունակի համապատասխան տողում նշվում է արժույթի անվանումը:
- **«Գինը հարկային տարվա սկզբին»** սյունակի համապատասխան տողերում լրացվում է արժեթղթերի գումարային արժեքը՝ հաշվարկված ներքոշարադրյալ սկզբունքով.
- **Բաժնային արժեթղթերի դեպքում** եթե տվյալ բաժնային արժեթուղթը թույլատրված է կարգավորվող շուկայում առևտրին (ցուցակված է բորսայում) և տվյալ բաժնային արժեթղթով գործարք է կնքվել հարկային տարվա սկզբին նախորդող վերջին 6 ամսվա ընթացքում, ապա սույն սյունակում լրացվում է կարգավորվող շուկայի (բորսայի) կողմից հրապարակված տվյալ արժեթղթով վերջին գործարքի հիմքում ընկած միավոր արժեթղթի գինը՝ բազմապատկած արժեթղթերի քանակով: Հակառակ դեպքում նշվում է բաժնային արժեթղթի անվանական արժեքը՝ բազմապատկած արժեթղթերի քանակով:
- **Ներդրումային ֆոնդերի փայերի (բաժնետոմսերի) դեպքում** լրացվում է հարկային տարվա

առաջին օրվա դրությամբ ֆոնդի տվյալ փայի (բաժնետոմսի) համար վերջին հրապարակված հաշվարկային արժեքը՝ բազմապատկած արժեթղթերի քանակով (առկայության դեպքում):

- **Պարտքային արժեթղթերի դեպքում** պարտքային արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը՝ բազմապատկած արժեթղթերի քանակով (առկայության դեպքում):
- **Վճարային արժեթղթերի դեպքում**՝ դրվում է «-» նշանը:
 - **«Ձեռք է բերվել հարկային տարում»** բաժնի **«գինը (արժեքը)»** սյունակի համապատասխան տողում նշվում է հարկային տարում ձեռք բերված (այդ թվում՝ ժառանգություն, նվիրատվություն կամ այլ հիմքերով արժեթղթերի ձեռքբերում, որոնց դեպքում տեղի չի ունեցել դրամական միջոցների արտահոսք) արժեթղթի գինը: Եթե տվյալ արժեթղթի ձեռքբերման դեպքում տեղի է ունեցել դրամական միջոցների արտահոսք, ապա տվյալ արժեթղթի գինը արժեթղթի ձեռքբերման դիմաց տրամադրված գումարն է: Վճարային արժեթղթերի դեպքում արժեթղթի գինը հանդիսանում է վճարային արժեթղթում նշված գումարը:
 - **«Օտարվել է հարկային տարում»** մասի **«գինը (արժեքը)»** սյունակի համապատասխան տողում նշվում է հարկային տարում օտարված (այդ թվում՝ նվիրատվություն կամ այլ ձևերով օտարում, որոնց դեպքում տեղի չի ունեցել դրամական միջոցների ներհոսք) արժեթղթի գինը: Եթե տվյալ արժեթղթի օտարման դիմաց տեղի է ունեցել դրամական միջոցների ներհոսք, ապա տվյալ արժեթղթի գինը արժեթղթի օտարման դիմաց ստացված գումարն է: Վճարային արժեթղթերի դեպքում արժեթղթի գինը հանդիսանում է վճարային արժեթղթում նշված գումարը:
 - **«Գինը հարկային տարվա վերջում»** սյունակի համապատասխան տողերում լրացվում է արժեթղթերի գումարային արժեքը՝ հաշվարկված ներքոշարադրյալ սկզբունքով.
 - **Բաժնային արժեթղթերի դեպքում** եթե տվյալ բաժնային արժեթուղթը թույլատրված է կարգավորվող շուկայում առևտրին (ցուցակված է բորսայում) և տվյալ բաժնային արժեթղթով գործարք է կնքվել հարկային տարվա վերջին նախորդող վերջին 6 ամսվա ընթացքում, ապա սույն սյունակում լրացվում է կարգավորվող շուկայի (բորսայի) կողմից հրապարակված տվյալ արժեթղթով վերջին գործարքի հիմքում ընկած միավոր արժեթղթի գինը՝ բազմապատկած արժեթղթերի քանակով: Հակառակ դեպքում նշվում է բաժնային արժեթղթի անվանական արժեքը՝ բազմապատկած արժեթղթերի քանակով:
 - **Պարտքային արժեթղթերի դեպքում**՝ պարտքային արժեթղթերի մնացորդային գումարը:
 - **Վճարային արժեթղթերի դեպքում**՝ նշվում է տվյալ վճարային արժեթղթի մնացորդային գումարը (առկայության դեպքում):

17. Հայտարարագրի «Բ4. Հանձնված կամ վերադարձված փոխառությունը» աղյուսակի՝

- **«Հանձնված կամ վերադարձված փոխառություն»** է համարվում հայտարարատուի կողմից այլ սուբյեկտի սեփականությանը դրամի (փոխառության գումարի) կամ այլ գույքի հանձնումը՝ միևնույն գումարի դրամ կամ ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք վերադարձնելու պայմանով, որը հայտարարատուն հանձնել է, կամ որը նրան վերադարձվել է հարկային տարում:
- **«Պարտապանի անվանումը կամ ազգանունը, անունը և հայրանունը»** սյունակի համապատասխան տողում լրացվում է փոխառություն ստացած կամ

վերադարձրած պարտապանի անվանումը՝ եթե այն իրավաբանական անձ է կամ ազգանունը, անունը և հայրանունը՝ եթե պարտապանը ֆիզիկական անձ է:

- **«Պարտապանի հասցեն»** սյունակի համապատասխան տողում լրացվում է հայտարարատուի կողմից փոխառություն ստացած կամ վերադարձրած պարտապանների հասցեն, իրավաբանական անձի դեպքում՝ գտնվելու վայրը, իսկ ֆիզիկական անձանց դեպքում՝ բնակության վայրի հասցեն:
- Հասցեն լրացնելիս անհրաժեշտ է նշել երկիրը, շրջանը, մարզը, նահանգը (այլ վարչատարածքային միավորը), քաղաքը, համայնքը (գյուղը կամ այլ բնակավայրը), փողոցը, տունը, շենքը և բնակարանը:
- **«Արժույթը»** սյունակի համապատասխան տողում նշվում է արժույթի անվանումը:
- **«Փոխառության գումարը (չափը) հարկային տարվա սկզբում»** սյունակի յուրաքանչյուր տողում լրացվում է հարկային տարվա սկզբի դրությամբ հայտարարատուի առկա փոխառությունների գումարի չափը:
- **«Հանձնվել է հարկային տարում»** սյունակի համապատասխան տողում նշվում է հարկային տարում փոխառության հանձնված գումարի չափը:
- **«Վերադարձվել է հարկային տարում»** սյունակի համապատասխան տողում նշվում է հարկային տարվա ընթացքում վերադարձված փոխառության գումարի չափը:
- **«Փոխառության գումարը (չափը)՝ հարկային տարվա վերջում»** սյունակի համապատասխան տողում տվյալ տեսակի փոխառության համար նշվում է հարկային տարվա սկզբում առկա փոխառության գումարի և հարկային տարվա ընթացքում հանձնված ու վերադարձված փոխառությունների գործարքների տարբերության հանրագումարը:

18. Հայտարարագրի **«Բ5. Սույն աղյուսակի Բ1-Բ4-րդ կետերում չնշված և 8 000 000 ՀՀ դրամը գերազանցող կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող ցանկացած գույք (թանկարժեք գույքը)»** աղյուսակի՝

- **«Գույքի անվանումը»** սյունակի համապատասխան տողում լրացվում է բարձրաստիճան պաշտոնատար անձին սեփականության իրավունքով պատկանող, Բ1-ից Բ4 կետերում չներառված, 8 000 000 ՀՀ դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող ցանկացած այն գույքի համառոտ հատկանիշները, որն օտարվել կամ ձեռք է բերվել հարկային տարում:
- **«Ձեռք է բերվել հարկային տարում»** սյունակի **«Գինը (արժեքը)»** հատվածի համապատասխան տողում նշվում է տվյալ հարկային տարվա ընթացքում ձեռք բերված յուրաքանչյուր միավոր թանկարժեք գույքի արժեքը՝ ըստ թանկարժեք գույքի ձեռքբերման պայմանագրում արտացոլված գնի:
- **«Արժույթը»** սյունակի համապատասխան տողում նշվում է արժույթի անվանումը:
- **«Օտարվել է հարկային տարում»** սյունակի **«Գինը (արժեքը)»** հատվածի համապատասխան տողում նշվում է տվյալ հարկային տարվա ընթացքում օտարված թանկարժեք գույքի արժեքը, ըստ օտարման պայմանագրում արտացոլված գնի:

19. Հայտարարագրի **«Բ6. Դրամական միջոցները»** աղյուսակի՝

- **«Արժույթը»** սյունակի համապատասխան տողում նշվում է արժույթի անվանումը:

- **«Չափը (գումարը) հարկային տարվա սկզբում»** սյունակի համապատասխան տողերում լրացվում է նշված արժույթով դրամական միջոցի (այդ թվում բանկում ունեցած) մեծությունը հարկային տարվա սկզբում:
- **«Չափը (գումարը) հարկային տարվա վերջում»** սյունակի համապատասխան տողերում լրացվում է նշված արժույթով դրամական միջոցի (այդ թվում բանկում ունեցած) մեծությունը հարկային տարվա վերջում:

Բաժին Գ. Բարձրաստիճան պաշտոնատար անձի եկամուտները

20. Հայտարարագրի **«Գ. Բարձրաստիճան պաշտոնատար անձի եկամուտները»** բաժնում ներկայացվում է բարձրաստիճան պաշտոնատար անձի հարկային տարում ԼՂՀ-ում և արտերկրում ստացած, «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ԼՂՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված եկամուտների տեսակները և դրանց ստացման աղբյուրները:

21. Ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով գույքի օտարումից կամ օգտագործումից ստացված ամբողջ եկամտից՝ բարձրաստիճան պաշտոնատար անձը հայտարարագրում արտացոլում է իր կողմից փաստացի ստացած մասը:

22. Հայտարարագրի **«Բաժին Գ. ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ»** աղյուսակի՝

- **«Եկամտի տեսակը»** սյունակի համապատասխան տողում լրացվում են հարկային տարում հայտարարատուի Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով և (կամ) բնամթերային (ոչ դրամական ձևով) վճարված համապատասխան եկամտի տեսակները՝ համաձայն Աղյուսակ 5-ի:
- **«Վճարողի անվանումը կամ ազգանունը, անունը և հայրանունը»** սյունակի համապատասխան տողում լրացվում է եկամուտ վճարող կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը և հայրանունը:
- **«Վճարողի հասցեն»** սյունակի համապատասխան տողում լրացվում է եկամուտ վճարող կազմակերպության գտնվելու վայրի կամ ֆիզիկական անձի բնակության վայրի լրիվ հասցեն:
- Հասցեն լրացնելիս անհրաժեշտ է նշել երկիրը, շրջանը, մարզը, նահանգը (այլ վարչատարածքային միավորը), քաղաքը, համայնքը (գյուղը կամ այլ բնակավայրը), փողոցը, տունը, շենքը և բնակարանը:
- **«Արժույթը»** սյունակի համապատասխան տողում նշվում է արժույթի անվանումը:
- **«Եկամտի չափը (գումարը)»** սյունակի համապատասխան տողում լրացվում է եկամուտ վճարողի կողմից հայտարարատուին վճարված եկամտի առձեռն կամ նրա հաշվին փոխանցված գումարի մեծությունը: Օրենքով սահմանված դեպքերում, հարկերը կամ պարտադիր վճարները եկամուտ վճարողի կողմից պահված լինելու դեպքում՝ նշվող գումարի չափը չի ներառում պահված հարկերը և պարտադիր վճարները: Այն դեպքում, երբ եկամուտ վճարողը հարկի կամ պարտադիր վճարի պահում չի կատարել՝ սյունակի համապատասխան տողում նշվում է ստացած ամբողջ գումարը:

« ՀՀ դրամով» սյունակի համապատասխան տողում լրացվում է հարկային տարում

վճարողի կողմից հայտարարատուին վճարված եկամտի գումարը՝ ՀՀ դրամով:

- «**արտարժույթով**» սյունակի համապատասխան տողում լրացվում է հարկային տարում վճարողի կողմից հայտարարատուին վճարված եկամտի գումարը՝ համապատասխան արտարժույթով:
- «**բնամթերքով**» սյունակի համապատասխան տողերում լրացվում է նվիրատվության կամ ժառանգության կարգով, ինչպես նաև վիճակախաղերի իրային շահումների (մրցանակների) տեսքով ստացված բնամթերային (ոչ դրամական ձևով) եկամտի չափը հարկային տարում, որը արտացոլվում է ՀՀ դրամով՝ բնամթերային (ոչ դրամական ձևով) եկամտի հաշվարկման ներքո շարադրյալ մեթոդներով:
- Բնամթերային (ոչ դրամական ձևով) եկամուտը կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից ստանալու դեպքում հայտարարագրում դրանք արտացոլվում են կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից եկամտի վճարման կամ նշված եկամտի պահանջի իրավունքի մարման ամսում (անհնարինության դեպքում նախորդող ամսում) **այլ անձանց՝ դրանց իրացման միջին գներով**, իսկ այդպիսի գների բացակայության դեպքում՝ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ մոտ դրանց ինքնարժեքի (կամ ձեռքբերման արժեքի) և դրա նկատմամբ օրենքով սահմանված դեպքերում անուղղակի հարկերի հանրագումարով:
- Բնամթերային եկամուտը այլ աղբյուրներից ստանալու դեպքում՝ հայտարարագրում դրանք հաշվի է առնվում և արտացոլվում է նույնանման գործարքների համար եկամտի ստացման կամ նշված եկամտի պահանջի իրավունքի մարման ամսվա **հրապարակված վիճակագրական գներով** (անհնարինության դեպքում նախորդող ամսվա հրապարակված վիճակագրական միջին գներ), իսկ դրանց բացակայության դեպքում՝ այդպիսի կամ նույնանման գործարքների համար եկամտի ստացմանը կամ նշված եկամտի պահանջի իրավունքի մարմանը նախորդող 12 ամսվան վերաբերող հրապարակված վիճակագրական միջին գները (սակագները):
- Վիճակագրական միջին գնի բացակայության դեպքում բնամթերային եկամուտը կամ բնամթերքով պահանջի իրավունքը հայտարարագրում արտացոլվում է **եկամտի ստացման կամ պահանջի իրավունքի առաջացման տարում այն ձեռք բերելու գնով**, որը նման հանգամանքներում սովորաբար գանձվում է նույնանման ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար: Այդ նպատակով կարող են կիրառվել առքովաճառքով զբաղվող սուբյեկտների (բրոքերների, մասնագիտացված խանութների, բորսաների, մասնագիտացված տոնավաճառների, շուկաների և այլն) գները (սակագները), գնացուցակային (կատալոգային) գները, այդ թվում՝ նաև համապատասխան դեպքերում համացանցի միջոցով ստացված տվյալները, ինչպես նաև նույնանման գույքի աճուրդային կարգով իրացման ձևավորված նախադեպային տվյալները:
- «**Ընդամենը**» տողի և «**Եկամտի չափը (գումարը)**» «**ՀՀ դրամով**», «**արտարժույթով**» և «**բնամթերքով**» սյունակների հատման համապատասխան վանդակներում լրացվում է ստացված եկամուտների տեսակների հանրագումարը:
- «**արտարժույթով**» սյունակի եկամտի հանրագումարը չի հաշվարկվում:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Բարձրաստիճան պաշտոնատար անձը պաշտոնական պարտականությունները ստանձնելու, դադարեցնելու օրվա դրությամբ հայտարարագրերն այդ օրերին հաջորդող 15 օրվա ընթացքում ներկայացնում է լիազորած մարմին: Նշված անձինք պաշտոնավարման ընթացքում հայտարարագրեր են ներկայացնում նաև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ ոչ ուշ, քան տվյալ տարվան հաջորդող տարվա փետրվարի 15-ը:

2. Հայտարարագիրը «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ԼՂՀ օրենքով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքում, բարձրաստիճան պաշտոնատար անձինք կրում են պատասխանատվություն օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԱՂՅՈՒՍԱԿ 1. ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ՀԵՏ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՑԱՆԿ

Հ/Հ	ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ	ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁ
1	Նախարարներ և նրանց տեղակալներ	Նախարարության համակարգում պաշտոն զբաղեցնող անձինք՝ «Նախարարության համակարգի պաշտոնները» ներառում են նախարարի, նախարարի տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարի, օգնականների և ռեֆերենտների, նախարարության աշխատակազմի, տարածքային ստորաբաժանումների, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմինների, նախարարության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև նախարարության կազմում գործող պետական հիմնարկների պաշտոնները: Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ պաշտոն զբաղեցնող փոխկապակցված անձանց ցանկը չի ներառում համապատասխան մարմնում տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնները: Տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց ցանկը սահմանվում է համապատասխան մարմնի հաստիքացուցակով
2	Գլխավոր դատախազը և նրա տեղակալները, շրջանների և Ստեփանակերտ քաղաքի դատախազները,	դատախազի, դատավորի, քննիչի պաշտոն զբաղեցնող անձինք

3	կառավարությանն առընթեր պետական մարմինների ղեկավարներ և ղեկավարների տեղակալներ	ԼՂՀ ԿԱ մարմնում (ներառյալ կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներում, ինչպես նաև ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպություններում) պաշտոն զբաղեցնող անձինք:
4	օրենքներով ստեղծված կոլեգիալ պետական մարմինների ղեկավարներ և անդամներ	այդ մարմնի ղեկավարի և անդամի պաշտոն զբաղեցնող անձինք, ինչպես նաև այդ մարմնի կողմից կարգավորվող ոլորտում գործող առևտրային կազմակերպություններում ղեկավար պաշտոն զբաղեցնող անձինք: Առևտրային կազմակերպությունների ղեկավար պաշտոններ են համարվում առևտրային կազմակերպության գործադիր մարմնի անդամների, ինչպես նաև առևտրային կազմակերպության խորհրդի անդամների պաշտոնները:
5	դատավորներ	դատախազի, դատավորի, քննիչի պաշտոն զբաղեցնող անձինք

ԱՂՅՈՒՍԱԿ 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հ/Հ	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏԵՍԱԿԸ
1	Հողամաս
2	Ընդերքի մաս
3	Մեկուսի ջրային օբյեկտ
4	Անտառ
5	Բազմամյա տնկի
6	Շենքը, շինությունը, այդ թվում
6.1	Անհատական բնակելի տունը՝ հողամասի վրա կառուցված, իր տնտեսական շինություններով կառույցը,
6.2	Բնակարանը՝ բազմաբնակարան բնակելի շենքում ֆիզիկական անձանց բնակության համար նախատեսված, իրավունքների պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմնում առանձին ծածկագրով գրանցված և համարակալված տարածքը,
6.3	Այգետնակը (ամառանոցը)՝ այգեգործական զանգվածում հողամասի վրա կառուցված ամառանոցային շինությունը
6.4	Բազմաբնակարան բնակելի շենքը՝ մեկից ավելի բնակարաններ, ոչ բնակելի և ընդհանուր օգտագործման տարածքներ ունեցող շինությունը.
6.5	Բազմաբնակարան շենքի ոչ բնակելի տարածքը (բազմաբնակարան շենքում բնակարան, հասարակական, արտադրական նշանակության շինություն չհամարվող, իրավունքների պետական գրանցումն իրականացնող լիազորված մարմնում առանձին ծածկագրով գրանցված և համարակալված տարածքը

6.6	Ավտոտնակը (տրանսպորտային միջոցների կայանման համար հողամասի վրա կառուցված առանձին շինությունը)
6.7	Հասարակական նշանակության շինությունը (բնակչության սոցիալական սպասարկման, ինչպես նաև վարչական ու հասարակական կազմակերպությունների տեղակայման համար նախատեսված շինությունը)
6.8	Արտադրական նշանակության շինությունը (արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրությունների տեղակայման և նրանց մեջ տեխնոլոգիական սարքավորումների շահագործման համար անհրաժեշտ պայմաններն ապահովող շինությունը)
6.9	Անավարտ (կիսակառույց) շինությունները (ԼՂՀ կառավարության սահմանած կարգով բնութագրվող)
6.10	ԼՂՀ օրենսդրության համաձայն նոր կառուցված, ձեռք բերված և անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնի կողմից հաշվառված ու գնահատված այն շինությունները, որոնք դեռևս չեն ստացել իրավունքների պետական գրանցում, ինչպես նաև սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա ինքնակամ կառուցված շենքերը և շինությունները, այդ թվում՝ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցները:
7	Հողին ամրակայված այլ անշարժ գույք

ԱՂՅՈՒՍԱԿ 3. ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հ/Հ	ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ
1	Ավտոմոբիլային տրանսպորտի միջոց, որի շարժիչի աշխատանքային ծավալը գերազանցում է 50 խոր. սանտիմետրը, իսկ առավելագույն արագությունը գերազանցում է 50 կմ/ժամը, այդ թվում
	ա) Բեռնատար (բեռնաուղևորատար) ավտոմոբիլային տրանսպորտի միջոց,
	բ) Մարդատար ավտոմոբիլային տրանսպորտի միջոց
2	Անվավոր մեքենա կամ մեխանիզմ
3	Թրթուրավոր մեքենա կամ մեխանիզմ
4	Ինքնագնաց մեքենա կամ մեխանիզմ
5	Տարբեր բեռնատարողությամբ կցորդ
6	Տարբեր բեռնատարողությամբ կիսակցորդ
7	Օդային փոխադրամիջոց
8	Զրային փոխադրամիջոց
9	Ձյունագնաց
10	Մոտոամենագնաց (քվադրոցիկլը)
11	Մոտոցիկլետ
12	Այլ ավտոմոբիլային տրանսպորտային միջոց

ԱՂՅՈՒՍԱԿ 4. ԱՐԺԵԹՂԹԻ ԿԱՄ ԱՅԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հ/Հ	ԱՐԺԵԹՂԹԻ ԿԱՄ ԱՅԼ ՆԵՐԴՐՄԱՆ ՏԵՍԱԿԸ
1	Բաժնային արժեթղթեր են համարվում
1.1	Բաժնետոմսը, բաժնետոմսերով ամրագրված իրավունքներին համարժեք իրավունքներ տվող այլ արժեթուղթը,
1.2	Բաժնետոմսը, 1-ին կետով սահմանված արժեթղթերի վրա հիմնված ղեկավար ստացականը (ղեկավար ստացական է համարվում օտարերկրյա թողարկողի բաժնետոմսերի, բաժնետոմսերով ամրագրված իրավունքներին համարժեք իրավունքներ տվող այլ փաստաթղթերի, պարտատոմսերի կամ պարտքային այլ արժեթղթերի հիման վրա թողարկված այն արժեթուղթը, որը դրա սեփականատիրոջն իրավունք է տալիս իրականացնել դրա հիմքում ընկած արժեթղթերով ամրագրված իրավունքները),
1.3	Ցանկացած այլ արժեթուղթ, որն իրավունք է տալիս ձեռք բերել 1-ին կետով սահմանված արժեթղթերը փոխարկման, փոխանակման կամ այլ իրավունքների իրականացման եղանակով և թողարկվել է սույն կետի 1-ին ենթակետով սահմանված արժեթղթերի թողարկողի կամ նրանց խմբի անդամ թողարկողի կողմից,
1.4	Ներդրումային ֆոնդերի փայերը (բաժնետոմսերը):
2	Պարտքային արժեթղթեր են համարվում՝
2.1	Պարտատոմսերը,
2.2	«Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով և «ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքով» սահմանված պարտքային այլ արժեթղթերը, այդ թվում՝ դրամական շուկայի գործիքներ (դրամական շուկայի գործիքները մինչև մեկ տարի մարման ժամկետ ունեցող պարտքային արժեթղթերն են, այդ թվում՝ կարճաժամկետ պարտատոմսերը և այլ կարճաժամկետ պարտքային արժեթղթերը):
3	Վճարային արժեթղթեր են համարվում չեկը, հասարակ մուրհակը և «ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքով» սահմանված այլ վճարային արժեթղթեր:
4	Այլ ներդրումները

ԱՂՅՈՒՍԱԿ 5. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հ/Հ	ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ
1	Աշխատանքի վարձատրություն և/կամ/ դրան հավասարեցված այլ վճարումներ
2	Գրականության, արվեստի կամ գիտական աշխատանքի օգտագործման կամ օգտվելու իրավունքի համար ցանկացած հեղինակային իրավունքից, ցանկացած արտոնագրից, ապրանքային նշանից, նախագծից կամ մոդելից, պլանից, գաղտնի բանաձևից կամ գործընթացից, էլեկտրոնային հաշվողական մեքենաների և տվյալների բազայի համար ծրագրերի կամ արդյունաբերական, առևտրային, գիտական սարքավորումներ օգտագործելու կամ օգտվելու համար իրավունքի կամ արդյունաբերական, տեխնիկական, կազմակերպական, առևտրային, գիտական փորձի վերաբերյալ տեղեկություն տրամադրելու համար ստացվող հատուցումը (ռոյալթի) և հեղինակային

	վարձատրությունը
3	Ստացված փոխառությունները (վարկերը)
4	Տրված փոխառություններից (վարկերից) ստացված տոկոսը և այլ հատուցումը
5	Շահաբաժիններ
6	Խաղատներում կամ շահումներով խաղերում ստացած եկամուտները (շահումները)
7	Մրցույթների կամ մրցությունների, ինչպես նաև վիճակախաղերի իրային կամ դրամական շահումները (մրցանակները)։
8	Նվիրատվության կամ օգնության կարգով ստացված գույքը, դրամական միջոցները (բացառությամբ աշխատանքի, ծառայության տեսքով ստացած)
9	Ապահովագրական հատուցումները
10	Գույքը (բացառությամբ դրամական միջոցների) օտարելուց ստացված եկամուտը
11	Վարձակալության դիմաց ստացված վճարը կամ այլ հատուցումը
12	Քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացված եկամուտը
13	Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտը
14	Ժառանգության կարգով ստացված գույքը (այդ թվում՝ դրամական միջոցները)
15	Փոխառություններ (վարկեր)
16	Միանվագ վճարները
17	Գույքային իրավունքներից ստացված եկամուտը
18	Այլ եկամուտները

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Մ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

**ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԱՄՈՒՍՆՈՒՆ, ՆՐԱ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ
ԱՊՐՈՂ ԾՆՈՂԻՆ, ՀԱՄԱՏԵՂ ԱՊՐՈՂ ՉԱՓԱՀԱՍ ԵՎ ՉԱՄՈՒՍՆԱՑԱԾ ԶԱՎԱԿԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԱՐԿԱՅԻՆ ՏԱՐՎԱ ԳՈՒՅՔԻ ԵՎ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԼՐԱՑՄԱՆ**

ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԼՐԱՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ընդհանուր դրույթներ

1. Սույն ուղեցույցը սահմանում է բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնուն, նրա հետ համատեղ ապրող ծնողին, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակին սեփականության իրավունքով պատկանող հարկային տարվա գույքի և եկամուտների հայտարարագրի (այսուհետ՝ Հայտարարագիր) լրացման նկատմամբ ներկայացվող պահանջները և ներկայացման կարգը:

2. Հայտարարագրի ներկայացման պարտականությունը բխում է «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ԼՂՀ օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներից:

3. Հայտարարագիրը ներկայացնում են «Հանրային ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 5-րդ հոդվածի, 1-ին մասի, 15-րդ կետով սահմանված բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի, վարչապետի, փոխվարչապետի, Ազգային ժողովի պատգամավորների, դատավորների, նախարարների և նրանց տեղակալների, գլխավոր դատախազի և նրա տեղակալների, շրջանների և Ստեփանակերտ քաղաքի դատախազների, օրենքներով ստեղծված պետական մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների և այդ մարմինների անդամների, կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի գլխավոր հարկադիր

կատարողի և նրա տեղակալների, վերահսկիչ պալատի նախագահի, նրա տեղակալի,

խորհրդի անդամների, մարդու իրավունքների պաշտպանի, Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի և նրա տեղակալների, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի, կառավարության աշխատակազմի ղեկավարի և նրա տեղակալների, Ստեփանակերտի քաղաքապետի և նրա տեղակալների, շրջանների վարչակազմերի ղեկավարների և նրանց տեղակալների, օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների, անվտանգության խորհրդի քարտուղարի և նրա տեղակալների, Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի խորհրդականների, Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի հատուկ հանձնարարությունների գծով ներկայացուցիչներ, խորհրդատուի և օգնականների, Ազգային ժողովի նախագահի խորհրդականների և օգնականների, վարչապետի խորհրդականների և օգնականների, ինչպես նաև Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայության ղեկավարի, վարչապետի վերահսկողական ծառայության ղեկավարի, Հայաստանի Հանրապետությունում Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցչի ամուսինը, նրա հետ համատեղ ապրող ծնողը, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակը:

4. Բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսինը, նրա հետ համատեղ ապրող ծնողը, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակը լրացնում է առանձին Հայտարարագիր:

5. Հայտարարագիրը լրացվում է համաձայն ԼՂՀ կառավարության 2014 թվականի մայիսի 22-ի N 314-Ն որոշման պահանջներին համապատասխան:

6. Հայտարարագիրը լրացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնուն, նրա հետ համատեղ ապրող ծնողին, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակին սեփականության իրավունքով պատկանող հարկային տարվա գույքի, եկամուտների սույն ուղեցույցով:

7. Բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնուն, նրա հետ համատեղ ապրող ծնողին, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակին սեփականության իրավունքով պատկանող հարկային տարվա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագիրը լրացնելիս անհրաժեշտ է նշել այն հարկային տարվա տարեթիվը, որի դրությամբ լրացվում է գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագիրը:

8. Բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու, նրա հետ համատեղ ապրող ծնողի, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակի տվյալները

9. **Հայտարարագրի «Բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու, նրա հետ համատեղ ապրող ծնողի, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակի տվյալները» աղյուսակի՝**

- **«Բարձրաստիճան պաշտոնատար անձի ազգանունը, անունը, հայրանունը»** տողում լրացվում է ազգանունը, անունը, հայրանունը՝ ըստ անձնագրի:
- **«Բարձրաստիճան պաշտոնատար անձի զբաղեցրած պաշտոնը»** տողում լրացվում է համապատասխան իրավական ակտով սահմանված պաշտոնի ամբողջական անվանումը՝ ներառելով պետական մարմնի անվանումը:
- **«Ամուսնու (ծնողի, զավակի) ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը»**

տողում լրացվում է ամուսնու (ծնողի, զավակի) ազգանունը, անունը, հայրանունը՝ ըստ անձնագրի, ինչպես նաև ծննդյան օրը, ամիսը և տարեթիվը, փակագծում նշելով ազգակցական կապը բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ:

- **«Ամուսնու (ծնողի, զավակի) անձնագրի սերիան, համարը, տրման ամսաթիվը, ում կողմից է տրված»** տողում լրացվում է հայտարարատուի անձնագրի պահանջվող տվյալները:
- **«Ամուսնու (ծնողի, զավակի) հեռախոսահամարները, էլեկտրոնային փոստի հասցեն»** տողում լրացվում են հայտարարատուի այն հեռախոսների կոդերը և համարները, ինչպես նաև էլ-փոստի հասցեն, որոնցով հնարավոր է կապ հաստատել հայտարարատուի հետ:
- **«Ամուսնու (ծնողի, զավակի) հայտարարագիրը ներկայացնելու օրը, ամիսը, տարին»** լրացվում է հայտարարագրի ներկայացման ամսաթվին համապատասխան:

Բաժին Ա. Բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու, նրա հետ համատեղ ապրող ծնողի, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակի գույքը

10. Հայտարարագրի «Ա. Բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու, նրա հետ համատեղ ապրող ծնողի, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակի գույքը» բաժնում ներկայացվում են բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնուն, նրա հետ համատեղ ապրող ծնողին, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակին ԼՂՀ-ում և արտերկրում սեփականության իրավունքով պատկանող հարկային տարում ձեռքբերված կամ օտարված գույքի վերաբերյալ տվյալներ:

11. Ընդհանուր համատեղ կամ բաժնային սեփականության իրավունքով պատկանող գույք ունենալու դեպքում՝ բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսինը, նրա հետ համատեղ ապրող ծնողը, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակը **«Ա. Բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու, նրա հետ համատեղ ապրող ծնողի, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակի գույքը»** բաժնի համապատասխան աղյուսակների **«Տեսակը»** սյունակի տողում փակագծերում նշում է նաև «համատեղ սեփականություն» կամ «բաժնային սեփականություն» բառերը:

12. Նվիրատվության կամ ժառանգության կարգով ստացված գույքի դեպքում՝ **«Ձեռք է բերվել հարկային տարում»** կամ **«Օտարվել է հարկային տարում»** **«գինը (արժեքը)»** սյունակների համապատասխան տողում, գույքի գինը արտացոլվում է Հայաստանի Հանրապետության դրամով՝ հաշվարկված գույքի գների (արժեքի) ներքոշարադրյալ մեթոդներով:

- Բնամթերային գույքը կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից ստանալու դեպքում հայտարարագրում դրանք արտացոլվում են կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից **այլ անձանց՝ դրանց իրացման միջին գներով**, իսկ այդպիսի գների բացակայության դեպքում՝ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ մոտ դրանց ինքնարժեքի (կամ ձեռքբերման արժեքի) և դրա նկատմամբ օրենքով սահմանված դեպքերում անուղղակի հարկերի հանրագումարով:

- Այլ աղբյուրներից ստանալու դեպքում՝ հայտարարագրում գույքի գինը արտացոլվում է նույնանման գործարքների տվյալ ամսվա **հրապարակված վիճակագրական գներով** (անհնարինության դեպքում նախորդող ամսվա հրապարակված վիճակագրական միջին գներ), իսկ դրանց բացակայության դեպքում՝ այդպիսի կամ նույնանման գործարքների համար՝ նախորդող 12 ամսվան վերաբերող հրապարակված վիճակագրական միջին գներով (սակագներով):
- Վիճակագրական միջին գնի բացակայության դեպքում գույքի գինը հայտարարագրում արտացոլվում է **եկամտի ստացման կամ պահանջի իրավունքի առաջացման տարում այն ձեռք բերելու գնով**, որը նման հանգամանքներում սովորաբար գանձվում է նույնանման ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների դիմաց: Այդ նպատակով կարող են կիրառվել առքուվաճառքով զբաղվող սուբյեկտների (բրոքերների, մասնագիտացված խանութների, բորսաների, մասնագիտացված տոնավաճառների, շուկաների և այլն) գները (սակագները), գնացուցակային (կատալոգային) գները, այդ թվում՝ նաև համապատասխան դեպքերում համացանցի միջոցով ստացված տվյալները, ինչպես նաև նույնանման գույքի աճուրդային կարգով իրացման ձևավորված նախադեպային տվյալները:

13. Բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու Հայտարարագրի «Ա.1. Անշարժ գույքը» աղյուսակի՝

- «**Տեսակը**» սյունակի համապատասխան տողում լրացվում է բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնուն սեփականության իրավունքով պատկանող այն անշարժ գույքը՝ հողամասը, ընդերքի մասը, մեկուսի ջրային օբյեկտը, անտառը, բազմամյա տնկին, շենքը, շինությունը, հողին ամրակայված այլ գույքը, որն օտարվել կամ ձեռք է բերվել հարկային տարում՝ համաձայն կից Աղյուսակ 1-ի:

Անշարժ գույքի ամեն մի տեսակի համար լրացվում է անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականով սահմանված գույքային միավորը:

- «**Գտնվելու վայրի հասցեն**» սյունակի համապատասխան տողում լրացվում է հայտարարագրման ենթակա անշարժ գույքի լրիվ հասցեն:

Հասցեն լրացնելիս անհրաժեշտ է նշել անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականում նշված հասցեն:

- «**Ձեռք է բերվել հարկային տարում**» սյունակի «**գինը (արժեքը)**» հատվածի համապատասխան տողում նշվում է տվյալ հարկային տարվա ընթացքում ձեռք բերված յուրաքանչյուր միավոր անշարժ գույքի արժեքը՝ ըստ անշարժ գույքի ձեռքբերման պայմանագրում արտացոլված գնի:
- «**արժույթը**» սյունակի համապատասխան տողում նշվում է արժույթի անվանումը:
- «**Օտարվել է հարկային տարում**» սյունակի «**գինը (արժեքը)**» հատվածի համապատասխան տողում նշվում է տվյալ հարկային տարվա ընթացքում օտարված անշարժ գույքի արժեքը:

14. Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ համատեղ ապրող ծնողի, համատեղ

ապրող չափահաս և չամուսնացած զավակի Հայտարարագրի «Ա1. Անշարժ գույքը»
աղյուսակի՝

- **«Տեսակը»** սյունակի համապատասխան տողում լրացվում է անշարժ գույքը, եթե հարկային տարում անշարժ գույքի ձեռքբերման կամ օտարման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) գերազանցել է 50 000 000 ՀՀ դրամը: Ընդ որում, ձեռքբերման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) կամ օտարման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) 50 000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում հայտարարագրման ենթակա են անշարժ գույքի ձեռքբերման և օտարման բոլոր գործարքները:
Հարկային տարում օտարված կամ ձեռքբերված անշարժ գույքի (հողամաս, ընդերքի մաս, մեկուսի ջրային օբյեկտ, անտառ, բազմամյա տնկի, շենք, շինություն և հողին ամրակայված այլ գույք) տեսակները Հայտարարագրում լրացվում է համաձայն կից Աղյուսակ 1-ի:
Անշարժ գույքի ամեն մի տեսակի համար լրացվում է անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականով սահմանված գույքային միավորը:
- **«Գտնվելու վայրի հասցեն»** սյունակի համապատասխան տողում լրացվում է հայտարարագրման ենթակա անշարժ գույքի լրիվ հասցեն:
Հասցեն լրացնելիս անհրաժեշտ է նշել անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականում նշված հասցեն:
- **«Ձեռք է բերվել հարկային տարում» սյունակի «գինը (արժեքը)»**
հատվածի համապատասխան տողում նշվում է տվյալ հարկային տարվա ընթացքում ձեռք բերված յուրաքանչյուր միավոր անշարժ գույքի արժեքը՝ ըստ անշարժ գույքի ձեռքբերման պայմանագրում արտացոլված գնի:
- **«արժույթը»** սյունակի համապատասխան տողում նշվում է արժույթի անվանումը:
- **«Օտարվել է հարկային տարում»** սյունակի **«գինը (արժեքը)»** հատվածի համապատասխան տողում նշվում է տվյալ հարկային տարվա ընթացքում օտարված անշարժ գույքի արժեքը:

15. Բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու Հայտարարագրի «Ա2.

Շարժական գույքը» աղյուսակի՝

- **«Տեսակը»** սյունակի յուրաքանչյուր տողում լրացվում է շարժական գույքի տեսակը՝ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը, անիվավոր, թրթուրավոր, ինքնագնաց մեքենան կամ մեխանիզմը, օդային, ջրային փոխադրամիջոցը, որն օտարվել կամ ձեռք է բերվել հարկային տարում՝ համաձայն կից Աղյուսակ 2-ի:
- Ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների շարքին են դասվում այն տրանսպորտային միջոցները, որոնց շարժիչների աշխատանքային ծավալը գերազանցում է 50 խոր. սանտիմետրը, իսկ առավելագույն արագությունը գերազանցում է 50 կմ/ժամը, ինչպես նաև տարբեր բեռնատարողությամբ կցորդները կամ կիսակցորդները:
- **«Սերիան, մակնիշը»** սյունակի համապատասխան տողերում լրացվում է հայտարարագրման ենթակա շարժական գույքի սերիան և մակնիշը, այդ թվում՝ թողարկման տարեթիվը: Մակնիշը և սերիան լրացվում է շարժական գույքի տեխնիկական փաստաթղթերում արտացոլված լեզվով:

- «**արժույթը**» սյունակի համապատասխան տողում նշվում է արժույթի անվանումը:
- «**Ձեռք է բերվել հարկային տարում» սյունակի «գինը (արժեքը)**»
հատվածի համապատասխան տողում նշվում է տվյալ հարկային տարվա ընթացքում ձեռք բերված յուրաքանչյուր միավոր շարժական գույքի արժեքը՝ ըստ գույքի ձեռքբերման պայմանագրում արտացոլված գնի:
- «**Օտարվել է հարկային տարում» սյունակի «գինը (արժեքը)**» հատվածի համապատասխան տողում նշվում է տվյալ հարկային տարվա ընթացքում օտարված շարժական գույքի արժեքը:

16. Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ համատեղ ապրող ծնողի, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակի Հայտարարագրի «Ա2. Շարժական գույքը» աղյուսակի՝

- «**Տեսակը**» սյունակի յուրաքանչյուր տողում լրացվում է շարժական գույքի տեսակը, եթե հարկային տարում շարժական գույքի ձեռքբերման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) կամ օտարման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) գերազանցել է 8 000 000 ՀՀ դրամը: Ընդ որում, ձեռքբերման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) կամ օտարման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) 8 000 000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում հայտարարագրման ենթակա են շարժական գույքի ձեռքբերման և օտարման բոլոր գործարքները:
Հարկային տարում ձեռքբերված կամ օտարված շարժական գույքի (ավտոմոբիլային տրանսպորտի միջոց, անիվավոր, թրթուրավոր, ինքնագնաց մեքենա կամ մեխանիզմ, օդային, ջրային փոխադրամիջոց) տեսակները Հայտարարագրում լրացվում է համաձայն կից Աղյուսակ 2-ի:
Ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների շարքին են դասվում այն տրանսպորտային միջոցները, որոնց շարժիչների աշխատանքային ծավալը գերազանցում է 50 խոր. սանտիմետրը, իսկ առավելագույն արագությունը գերազանցում է 50 կմ/ժամը, ինչպես նաև տարբեր բեռնատարողությամբ կցորդները կամ կիսակցորդները:
- «**Սերիան, մակնիշը**» սյունակի համապատասխան տողերում լրացվում է հայտարարագրման ենթակա շարժական գույքի սերիան և մակնիշը, այդ թվում՝ թողարկման տարեթիվը: Մակնիշը և սերիան լրացվում է շարժական գույքի տեխնիկական փաստաթղթերում արտացոլված լեզվով:
- «**արժույթը**» սյունակի համապատասխան տողում նշվում է արժույթի անվանումը:
- «**Ձեռք է բերվել հարկային տարում» սյունակի «գինը (արժեքը)**»
հատվածի համապատասխան տողում նշվում է տվյալ հարկային տարվա ընթացքում ձեռք բերված յուրաքանչյուր միավոր շարժական գույքի արժեքը՝ ըստ գույքի ձեռքբերման պայմանագրում արտացոլված գնի:
- «**Օտարվել է հարկային տարում» սյունակի «գինը (արժեքը)**» հատվածի համապատասխան տողում նշվում է տվյալ հարկային տարվա ընթացքում օտարված շարժական գույքի արժեքը:

17. Բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու Հայտարարագրի «Ա3. Արժեթղթերը և այլ ներդրումները» աղյուսակի՝

- «**Տեսակը**» սյունակի յուրաքանչյուր տողում լրացվում է այն արժեթղթի տեսակը (պարտատոմսը, չեկը, մուրհակը, բաժնետոմսը և Հայաստանի Հանրապետության

օրենքներով արժեթղթերի թվին դասվող այլ փաստաթուղթը, բացառությամբ բանկային վկայագրի) և (կամ) այլ ներդրումը հավաստող փաստաթուղթը (բաժնեմասը, փայաբաժինը), որը օտարվել կամ ձեռք է բերվել հարկային տարում՝ համաձայն կից Աղյուսակ3-ի:

- Սյունակի յուրաքանչյուր տողում փակագծերում նշվում է նաև համապատասխան արժեթուղթը թողարկողի անվանումը կամ ազգանունը, անունը, հայրանունը, ինչպես նաև արժեթղթի ծածկագիրը (առկայության դեպքում): Օտարերկրյա արժեթղթերի դեպքում ավելացվում է նաև «օտարերկրյա» բառը:
- «Արժույթը» սյունակի համապատասխան տողում նշվում է արժույթի անվանումը:
- «Գինը հարկային տարվա սկզբին» սյունակի համապատասխան տողերում լրացվում է արժեթղթերի գումարային արժեքը՝ հաշվարկված ներքոշարադրյալ սկզբունքով.
- **Բաժնային արժեթղթերի դեպքում՝** եթե տվյալ բաժնային արժեթուղթը թույլատրված է կարգավորվող շուկայում առևտրին (ցուցակված է բորսայում) և տվյալ բաժնային արժեթղթով գործարք է կնքվել հարկային տարվա սկզբին նախորդող վերջին 6 ամսվա ընթացքում, ապա սույն սյունակում լրացվում է կարգավորվող շուկայի (բորսայի) կողմից հրապարակված տվյալ արժեթղթով վերջին գործարքի հիմքում ընկած միավոր արժեթղթի գինը՝ բազմապատկած արժեթղթերի քանակով: Հակառակ դեպքում նշվում է բաժնային արժեթղթի անվանական արժեքը՝ բազմապատկած արժեթղթերի քանակով:
- **Ներդրումային ֆոնդերի փայերի (բաժնետոմսերի) դեպքում՝** լրացվում է հարկային տարվա առաջին օրվա դրությամբ ֆոնդիտվյալ փայի (բաժնետոմսի) համար վերջին անգամ հրապարակված հաշվարկային արժեքը՝ բազմապատկած արժեթղթերի քանակով (առկայության դեպքում):
- **Պարտքային արժեթղթերի դեպքում՝** պարտքային արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը՝ բազմապատկած արժեթղթերի քանակով (առկայության դեպքում):
- **Վճարային արժեթղթերի դեպքում՝** դրվում է «-» նշանը:
- «**Ձեռք է բերվել հարկային տարում**» բաժնի «**գինը (արժեքը)**» սյունակի համապատասխան տողում նշվում է հարկային տարում ձեռք բերված (այդ թվում՝ ժառանգություն, նվիրատվություն կամ այլ հիմքերով արժեթղթերի ձեռքբերում, որոնց դեպքում տեղի չի ունեցել դրամական միջոցների արտահոսք) արժեթղթի գինը: Եթե տվյալ արժեթղթի ձեռքբերման դեպքում տեղի է ունեցել դրամական միջոցների արտահոսք, ապա տվյալ արժեթղթի գինը արժեթղթի ձեռքբերման դիմաց տրամադրված գումարն է: Վճարային արժեթղթերի դեպքում արժեթղթի գինը հանդիսանում է վճարային արժեթղթում նշված գումարը:
- «**Օտարվել է հարկային տարում**» մասի «**գինը (արժեքը)**» սյունակի համապատասխան տողում նշվում է հարկային տարում օտարված (այդ թվում՝ նվիրատվություն կամ այլ ձևերով օտարում, որոնց դեպքում տեղի չի ունեցել դրամական միջոցների ներհոսք) արժեթղթի գինը: Եթե տվյալ արժեթղթի օտարման դիմաց տեղի է ունեցել դրամական միջոցների ներհոսք, ապա տվյալ արժեթղթի գինը արժեթղթի օտարման

դիմաց ստացված գումարն է: Վճարային արժեթղթերի դեպքում արժեթղթի գինը հանդիսանում է վճարային արժեթղթում նշված գումարը:

- **«Գինը հարկային տարվա վերջում»** սյունակի համապատասխան տողերում լրացվում է արժեթղթերի գումարային արժեքը՝ հաշվարկված ներքոշարադրյալ սկզբունքով.
- **Բաժնային արժեթղթերի դեպքում**, եթե տվյալ բաժնային արժեթուղթը թույլատրված է կարգավորվող շուկայում առևտրին (ցուցակված է բորսայում) և տվյալ բաժնային արժեթղթով գործարք է կնքվել հարկային տարվա վերջին նախորդող վերջին 6 ամսվա ընթացքում, ապա սույն սյունակում լրացվում է կարգավորվող շուկայի (բորսայի) կողմից հրապարակված տվյալ արժեթղթով վերջին գործարքի հիմքում ընկած միավոր արժեթղթի գինը՝ բազմապատկած արժեթղթերի քանակով:
Հակառակ դեպքում նշվում է բաժնային արժեթղթի անվանական արժեքը՝ բազմապատկած արժեթղթերի քանակով:
- **Պարտքային արժեթղթերի դեպքում**՝ պարտքային արժեթղթերի մնացորդային գումարը:
- **Վճարային արժեթղթերի դեպքում**՝ նշվում է տվյալ վճարային արժեթղթի մնացորդային գումարը (առկայության դեպքում):

18. Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ համատեղ ապրող ծնողի, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակի Հայտարարագրի «ԱՅ. Արժեթղթերը և այլ ներդրումները» աղյուսակի՝

- **«Տեսակը»** սյունակի յուրաքանչյուր տողում լրացվում է այն արժեթուղթը և (կամ) այլ ներդրումը, եթե հարկային տարում արժեթղթերի ձեռքբերման և (կամ) այլ ներդրման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) կամ օտարման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) գերազանցել է 8 000 000 ՀՀ դրամը: Ընդ որում, ձեռքբերման և (կամ) այլ ներդրման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) կամ օտարման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) 8 000 000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում հայտարարագրման ենթակա են արժեթղթերի ձեռքբերման և (կամ) այլ ներդրման և օտարման բոլոր գործարքները.

Հարկային տարում ձեռքբերված կամ օտարված արժեթղթի (պարտատոմսը, չեկը, մուրհակը, բաժնետոմսը և Հայաստանի Հանրապետության օրենքներով արժեթղթերի թվին դասվող այլ փաստաթուղթը, բացառությամբ բանկային վկայագրի) և (կամ) այլ ներդրումը հավաստող փաստաթուղթը (բաժնեմասը, փայաբաժինը) տեսակները Հայտարարագրում լրացվում է համաձայն կից Աղյուսակ 3-ի:

«Տեսակը» սյունակի յուրաքանչյուր տողում, փակագծերում նշվում է նաև համապատասխան արժեթուղթը թողարկողի անվանումը կամ ազգանունը, անունը, հայրանունը, ինչպես նաև արժեթղթի ծածկագիրը (առկայության դեպքում): Օտարերկրյա արժեթղթերի դեպքում ավելացվում է նաև «օտարերկրյա» բառը:

- **«Արժույթը»** սյունակի համապատասխան տողում նշվում է արժույթի անվանումը:
- **«Գինը հարկային տարվա սկզբին»** սյունակի համապատասխան տողերում լրացվում է արժեթղթերի գումարային արժեքը՝ հաշվարկված ներքոշարադրյալ սկզբունքով.
- **Բաժնային արժեթղթերի դեպքում** եթե տվյալ բաժնային արժեթուղթը թույլատրված

է կարգավորվող շուկայում առևտրին (ցուցակված է բորսայում) և տվյալ բաժնային արժեթղթով գործարք է կնքվել հարկային տարվա սկզբին նախորդող վերջին 6 ամսվա ընթացքում, ապա սույն սյունակում լրացվում է կարգավորվող շուկայի (բորսայի) կողմից հրապարակված տվյալ արժեթղթով վերջին գործարքի հիմքում ընկած միավոր արժեթղթի գինը՝ բազմապատկած արժեթղթերի քանակով: Հակառակ դեպքում նշվում է բաժնային արժեթղթի անվանական արժեքը՝ բազմապատկած արժեթղթերի քանակով:

- **Ներդրումային ֆոնդերի փայերի (բաժնետոմսերի) դեպքում** լրացվում է հարկային տարվա առաջին օրվա դրությամբ ֆոնդի տվյալ փայի (բաժնետոմսի) համար վերջին հրապարակված հաշվարկային արժեքը՝ բազմապատկած արժեթղթերի քանակով (առկայության դեպքում):
- **Պարտքային արժեթղթերի դեպքում** պարտքային արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը՝ բազմապատկած արժեթղթերի քանակով (առկայության դեպքում):
- **Վճարային արժեթղթերի դեպքում՝** դրվում է «-» նշանը:
- **«ձեռք է բերվել հարկային տարում»** բաժնի **«գինը (արժեքը)»** սյունակի համապատասխան տողում նշվում է հարկային տարում ձեռք բերված (այդ թվում՝ ժառանգություն, նվիրատվություն կամ այլ հիմքերով արժեթղթերի ձեռքբերում, որոնց դեպքում տեղի չի ունեցել դրամական միջոցների արտահոսք) արժեթղթի գինը: Եթե տվյալ արժեթղթի ձեռքբերման դեպքում տեղի է ունեցել դրամական միջոցների արտահոսք, ապա տվյալ արժեթղթի գինը արժեթղթի ձեռքբերման դիմաց տրամադրված գումարն է: Վճարային արժեթղթերի դեպքում արժեթղթի գինը հանդիսանում է վճարային արժեթղթում նշված գումարը:
- **«Օտարվել է հարկային տարում»** մասի **«գինը (արժեքը)»** սյունակի համապատասխան տողում նշվում է հարկային տարում օտարված (այդ թվում՝ նվիրատվություն կամ այլ ձևերով օտարում, որոնց դեպքում տեղի չի ունեցել դրամական միջոցների ներհոսք) արժեթղթի գինը: Եթե տվյալ արժեթղթի օտարման դիմաց տեղի է ունեցել դրամական միջոցների ներհոսք, ապա տվյալ արժեթղթի գինը արժեթղթի օտարման դիմաց ստացված գումարն է: Վճարային արժեթղթերի դեպքում արժեթղթի գինը հանդիսանում է վճարային արժեթղթում նշված գումարը:
- **«Գինը հարկային տարվա վերջում»** սյունակի համապատասխան տողերում լրացվում է արժեթղթերի գումարային արժեքը՝ հաշվարկված ներքոշարադրյալ սկզբունքով.
 - **Բաժնային արժեթղթերի դեպքում** եթե տվյալ բաժնային արժեթուղթը թույլատրված է կարգավորվող շուկայում առևտրին (ցուցակված է բորսայում) և տվյալ բաժնային արժեթղթով գործարք է կնքվել հարկային տարվա վերջին նախորդող վերջին 6 ամսվա ընթացքում, ապա սույն սյունակում լրացվում է կարգավորվող շուկայի (բորսայի) կողմից հրապարակված տվյալ արժեթղթով վերջին գործարքի հիմքում ընկած միավոր արժեթղթի գինը՝ բազմապատկած արժեթղթերի քանակով: Հակառակ դեպքում նշվում է բաժնային արժեթղթի անվանական արժեքը՝ բազմապատկած արժեթղթերի քանակով:
 - **Պարտքային արժեթղթերի դեպքում՝** պարտքային արժեթղթերի մնացորդային գումարը:

- **Վճարային արժեթղթերի դեպքում՝** նշվում է տվյալ վճարային արժեթղթի մնացորդային գումարը (առկայության դեպքում):

19. Բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու Հայտարարագրի «Ա4.

Հանձնված կամ վերադարձված փոխառությունը» աղյուսակի՝

- **«Հանձնված կամ վերադարձված փոխառություն»** է համարվում հայտարարատուի կողմից այլ սուբյեկտի սեփականությանը դրամի (փոխառության գումարի) կամ այլ գույքի հանձնումը՝ միևնույն գումարի դրամ կամ ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք վերադարձնելու պայմանով, որը հայտարարատուն հանձնել է, կամ որը նրան վերադարձվել է հարկային տարում:
- **«Պարտապանի անվանումը կամ ազգանունը, անունը և հայրանունը»** սյունակի համապատասխան տողում լրացվում է փոխառություն ստացած կամ վերադարձրած պարտապանի անվանումը՝ եթե այն իրավաբանական անձ է կամ ազգանունը, անունը և հայրանունը՝ եթե պարտապանը ֆիզիկական անձ է:
- **«Պարտապանի հասցեն»** սյունակի համապատասխան տողում լրացվում է հայտարարատուի կողմից փոխառություն ստացած կամ վերադարձրած պարտապանների հասցեն, իրավաբանական անձի դեպքում՝ գտնվելու վայրը, իսկ ֆիզիկական անձանց դեպքում՝ բնակության վայրի հասցեն:
- Հասցեն լրացնելիս անհրաժեշտ է նշել երկիրը, շրջանը, մարզը, նահանգը (այլ վարչատարածքային միավորը), քաղաքը, համայնքը (գյուղը կամ այլ բնակավայրը), փողոցը, տունը, շենքը և բնակարանը:
- **«Արժույթը»** սյունակի համապատասխան տողում նշվում է արժույթի անվանումը:
- **«Փոխառության գումարը (չափը) հարկային տարվա սկզբում»** սյունակի յուրաքանչյուր տողում լրացվում է հարկային տարվա սկզբի դրությամբ հայտարարատուի առկա փոխառությունների գումարի չափը:
- **«Հանձնվել է հարկային տարում»** սյունակի համապատասխան տողում նշվում է հարկային տարում փոխառության հանձնված գումարի չափը:
- **«Վերադարձվել է հարկային տարում»** սյունակի համապատասխան տողում նշվում է հարկային տարվա ընթացքում վերադարձված փոխառության գումարի չափը:
- **«Փոխառության գումարը (չափը) հարկային տարվա վերջում»** սյունակի համապատասխան տողում տվյալ տեսակի փոխառության համար նշվում է հարկային տարվա սկզբում առկա փոխառության գումարի և հարկային տարվա ընթացքում հանձնված ու վերադարձված փոխառությունների գործարքների տարբերության հանրագումարը:

20. Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ համատեղ ապրող ծնողի, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակի Հայտարարագրի «Ա4. Հանձնված կամ վերադարձված փոխառությունը» աղյուսակի՝

- **«Հանձնված կամ վերադարձված փոխառություն»** է համարվում Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ համատեղ ապրող ծնողի, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակի կողմից այլ սուբյեկտի սեփականությանը դրամի (փոխառության գումարի) կամ այլ գույքի հանձնումը՝ միևնույն գումարի դրամ կամ ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք

վերադարձնելու պայմանով, որը հայտարարատուն հանձնել է, կամ որը նրան վերադարձվել է հարկային

- Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ համատեղ ապրող ծնողի, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակի փոխառությունը հայտարարագրվում է, եթե հարկային տարում փոխառության հանձնման գործարքների ընդհանուր գումարը (չափը) կամ վերադարձման գործարքների ընդհանուր գումարը (չափը) գերազանցել է 8 000 000 ՀՀ դրամը: Ընդ որում, փոխառության հանձնման գործարքների ընդհանուր գումարը (չափը) կամ վերադարձման գործարքների ընդհանուր գումարը (չափը) 8 000 000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում հայտարարագրման ենթակա են փոխառության հանձնման և վերադարձման բոլոր գործարքները:
- **«Պարտապանի անվանումը կամ ազգանունը, անունը և հայրանունը»**
սյունակի համապատասխան տողում լրացվում է փոխառություն ստացած կամ վերադարձրած պարտապանի անվանումը՝ եթե այն իրավաբանական անձ է կամ ազգանունը, անունը և հայրանունը՝ եթե պարտապանը ֆիզիկական անձ է:
- **«Պարտապանի հասցեն»** սյունակի համապատասխան տողում լրացվում է հայտարարատուի կողմից փոխառություն ստացած կամ վերադարձրած պարտապանների հասցեն, իրավաբանական անձի դեպքում՝ գտնվելու վայրը, իսկ ֆիզիկական անձանց դեպքում՝ բնակության վայրի հասցեն:
- Հասցեն լրացնելիս անհրաժեշտ է նշել երկիրը, շրջանը, մարզը, նահանգը (այլ վարչատարածքային միավորը), քաղաքը, համայնքը (գյուղը կամ այլ բնակավայրը), փողոցը, տունը, շենքը և բնակարանը:
- **«Արժույթը»** սյունակի համապատասխան տողում նշվում է արժույթի անվանումը:
- **«Փոխառության գումարը (չափը)՝ հարկային տարվա սկզբում»**
սյունակի յուրաքանչյուր տողում լրացվում է հարկային տարվա սկզբի դրությամբ հայտարարատուի առկա փոխառությունների գումարի չափը:
- **«Հանձնվել է հարկային տարում»** սյունակի համապատասխան տողում նշվում է հարկային տարում փոխառության հանձնված գումարի չափը:
- **«Վերադարձվել է հարկային տարում»** սյունակի համապատասխան տողում նշվում է հարկային տարվա ընթացքում վերադարձված փոխառության գումարի չափը:
- **«Փոխառության գումարը (չափը) հարկային տարվա վերջում»** սյունակի համապատասխան տողում տվյալ տեսակի փոխառության համար նշվում է հարկային տարվա սկզբում առկա փոխառության գումարի և հարկային տարվա ընթացքում հանձնված ու վերադարձված փոխառությունների գործարքների տարբերության հանրագումարը:

21. Բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու Հայտարարագրի «Ա5. Սույն աղյուսակի Ա1-Ա4-րդ կետերում չնշված և 8 000 000 ՀՀ դրամը գերազանցող կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող ցանկացած գույք (թանկարժեք գույքը)» աղյուսակի՝

- **«Գույքի անվանումը»** սյունակի համապատասխան տողում լրացվում է

բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնուն սեփականության իրավունքով պատկանող, Ա1-ից Ա-4 կետերում չներառված, 8 000 000 ՀՀ դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող ցանկացած այն գույքի համառոտ հատկանիշները, որն օտարվել կամ ձեռք է բերվել հարկային տարում:

- **«Ձեռք է բերվել հարկային տարում» սյունակի «գինը (արժեքը)»**
հատվածի համապատասխան տողում նշվում է տվյալ հարկային տարվա ընթացքում ձեռք բերված յուրաքանչյուր միավոր թանկարժեք գույքի արժեքը՝ ըստ թանկարժեք գույքի ձեռքբերման պայմանագրում արտացոլված գնի:
- **«արժույթը»** սյունակի համապատասխան տողում նշվում է արժույթի անվանումը:
- **«Օտարվել է հարկային տարում»** սյունակի **«գինը (արժեքը)»** հատվածի համապատասխան տողում նշվում է տվյալ հարկային տարվա ընթացքում օտարված թանկարժեք գույքի արժեքը, ըստ օտարման պայմանագրում արտացոլված գնի:

22. Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ համատեղ ապրող ծնողի, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակի Հայտարարագրի «Ա5. Սույն աղյուսակի Ա1-Ա4-րդ կետերում նշված և 8 000 000 ՀՀ դրամը գերազանցող կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող ցանկացած գույք (թանկարժեք գույքը)» աղյուսակի՝

- **«Գույքի անվանումը»** սյունակի համապատասխան տողում լրացվում է բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ համատեղ ապրող ծնողի, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակին սեփականության իրավունքով պատկանող, Ա1-ից Ա-4 կետերում չներառված, 8 000 000 ՀՀ դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող ցանկացած այն գույքի համառոտ հատկանիշները, որն օտարվել կամ ձեռք է բերվել հարկային տարում:
- **«Ձեռք է բերվել հարկային տարում» սյունակի «գինը (արժեքը)»**
հատվածի համապատասխան տողում նշվում է տվյալ հարկային տարվա ընթացքում ձեռք բերված յուրաքանչյուր միավոր թանկարժեք գույքի արժեքը՝ ըստ թանկարժեք գույքի ձեռքբերման պայմանագրում արտացոլված գնի:
- **«արժույթը»** սյունակի համապատասխան տողում նշվում է արժույթի անվանումը:
- **«Օտարվել է հարկային տարում»** սյունակի **«գինը (արժեքը)»** հատվածի համապատասխան տողում նշվում է տվյալ հարկային տարվա ընթացքում օտարված թանկարժեք գույքի արժեքը, ըստ օտարման պայմանագրում արտացոլված գնի:

23. Հայտարարագրի «Ա.6. Բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու դրամական միջոցները» աղյուսակի՝

- **«Արժույթը»** սյունակի համապատասխան տողում նշվում է արժույթի անվանումը:
- **«Չափը (գումարը) հարկային տարվա սկզբում»** սյունակի համապատասխան տողերում լրացվում է նշված արժույթով դրամական միջոցի (այդ թվում բանկում ունեցած) մեծությունը հարկային տարվա սկզբում:
- **«Չափը (գումարը) հարկային տարվա վերջում»** սյունակի համապատասխան տողերում լրացվում է նշված արժույթով դրամական միջոցի (այդ թվում բանկում ունեցած) մեծությունը հարկային տարվա վերջում:

Բաժին Բ. Բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու, նրա հետ համատեղ ապրող ծնողի, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակի եկամուտները

24. Հայտարարագրի «Բ. Բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու, նրա հետ համատեղ ապրող ծնողի, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակի եկամուտները» բաժնում ներկայացվում է բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու, նրա հետ համատեղ ապրող ծնողի, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակի՝ հարկային տարում ԼՂՀ-ում և արտերկրում ստացած՝ «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ԼՂՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ և 4- րդ մասերով սահմանված եկամուտների տեսակները և դրանց ստացման աղբյուրները:

25. Ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով գույքի օտարումից կամ օգտագործումից ստացված ամբողջ եկամտից՝ բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսինը, նրա հետ համատեղ ապրող ծնողը, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակը հայտարարագրում արտացոլում է իր կողմից փաստացի ստացած մասը:

26. Հայտարարագրի «Բաժին Բ. ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԱՄՈՒՍՆՈՒ, ՆՐԱ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ԱՊՐՈՂ ԾՆՈՂԻ, ՀԱՄԱՏԵՂ ԱՊՐՈՂ ՉԱՓԱՀԱՍ ԵՎ ՉԱՄՈՒՍՆԱՑԱԾ ՉԱՎԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ» աղյուսակի՝

- **«Եկամտի տեսակը»** սյունակի համապատասխան տողում լրացվում են հարկային տարում հայտարարատուին Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով և (կամ) բնամթերային (ոչ դրամական ձևով) վճարված համապատասխան եկամտի տեսակները՝ համաձայն Աղյուսակ 4-ի:
- **«Վճարողի անվանումը կամ ազգանունը, անունը և հայրանունը»**
սյունակի համապատասխան տողում լրացվում է եկամուտ վճարող կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը և հայրանունը:
«Վճարողի հասցեն» սյունակի համապատասխան տողում լրացվում է եկամուտ վճարող կազմակերպության գտնվելու վայրի կամ ֆիզիկական անձի բնակության վայրի լրիվ հասցեն:
- Հասցեն լրացնելիս անհրաժեշտ է նշել երկիրը, շրջանը մարզը, նահանգը (այլ վարչա տարածքային միավորը), քաղաքը, համայնքը (գյուղը կամ այլ բնակավայրը), փողոցը, տունը, շենքը և բնակարանը:
- **«Արժույթը»** սյունակի համապատասխան տողում նշվում է արժույթի անվանումը:
- **«Եկամտի չափը (գումարը)»** սյունակի համապատասխան տողում լրացվում է եկամուտ վճարողի կողմից հայտարարատուին վճարված եկամտի առձեռն կամ նրա հաշվին փոխանցված գումարի մեծությունը: Օրենքով սահմանված դեպքերում, հարկերը կամ պարտադիր վճարները եկամուտ վճարողի կողմից պահված լինելու դեպքում՝ նշվող գումարի չափը չի ներառում պահված հարկերը և պարտադիր վճարները: Այն դեպքում, երբ եկամուտ վճարողը հարկի կամ պարտադիր վճարի պահում չի կատարել՝ սյունակի համապատասխան տողում նշվում է ստացած ամբողջ գումարը:

- «**դրամով**» սյունակի համապատասխան տողում լրացվում է հարկային տարում վճարողի կողմից հայտարարատուին վճարված եկամտի գումարը՝ ՀՀ դրամով:
- «**արտարժույթով**» սյունակի համապատասխան տողում լրացվում է հարկային տարում վճարողի կողմից հայտարարատուին վճարված եկամտի գումարը՝ համապատասխան արտարժույթով:
- «**բնամթերքով**» սյունակի համապատասխան տողերում լրացվում է նվիրատվության կամ ժառանգության կարգով, ինչպես նաև վիճակախաղերի իրային շահումների (մրցանակների) տեսքով ստացված բնամթերային (ոչ դրամական ձևով) եկամտի չափը հարկային տարում, որը արտացոլվում է ՀՀ դրամով՝ բնամթերային (ոչ դրամական ձևով) եկամտի հաշվարկման ներքոշարադրյալ մեթոդներով:
- Բնամթերային (ոչ դրամական ձևով) եկամուտը կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից ստանալու դեպքում հայտարարագրում դրանք արտացոլվում են կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից եկամտի վճարման կամ նշված եկամտի պահանջի իրավունքի մարման ամսում (անհնարինության դեպքում նախորդող ամսում) **այլ անձանց՝ դրանց իրացման միջին գներով**, իսկ այդպիսի գների բացակայության դեպքում՝ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ մոտ դրանց ինքնարժեքի (կամ ձեռքբերման արժեքի) և դրա նկատմամբ օրենքով սահմանված դեպքերում անուղղակի հարկերի հանրագումարով:
- Բնամթերային եկամուտը այլ աղբյուրներից ստանալու դեպքում՝ հայտարարագրում դրանք հաշվի է առնվում և արտացոլվում է նույնանման գործարքների համար եկամտի ստացման կամ նշված եկամտի պահանջի իրավունքի մարման ամսվա **հրապարակված վիճակագրական գներով** (անհնարինության դեպքում նախորդող ամսվա հրապարակված վիճակագրական միջին գներ), իսկ դրանց բացակայության դեպքում՝ այդպիսի կամ նույնանման գործարքների համար եկամտի ստացմանը կամ նշված եկամտի պահանջի իրավունքի մարմանը նախորդող 12 ամսվան վերաբերող հրապարակված վիճակագրական միջին գները (սակագները):
- Վիճակագրական միջին գնի բացակայության դեպքում բնամթերային եկամուտը կամ բնամթերքով պահանջի իրավունքը հայտարարագրում արտացոլվում է **եկամտի ստացման կամ պահանջի իրավունքի առաջացման տարում այն ձեռք բերելու գնով**, որը նման հանգամանքներում սովորաբար գանձվում է նույնանման ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար: Այդ նպատակով կարող են կիրառվել առքուվաճառքով զբաղվող սուբյեկտների (բրոքերների, մասնագիտացված խանութների, բորսաների, մասնագիտացված տոնավաճառների, շուկաների և այլն) գները (սակագները), գնացուցակային (կատալոգային) գները, այդ թվում՝ նաև համապատասխան դեպքերում համացանցի միջոցով ստացված տվյալները, ինչպես նաև նույնանման գույքի աճուրդային կարգով իրացման ձևավորված նախադեպային տվյալները:
- «**Ընդամենը**» տողի և «**Եկամտի չափը (գումարը)**» «**ՀՀ դրամով**», «**արտարժույթով**» և «**բնամթերքով**» սյունակների հատման համապատասխան վանդակներում լրացվում է ստացված եկամուտների տեսակների հանրագումարը:

- «արտարժույթով» եկամտի հանրագումարը չի հաշվարկվում:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

27. Բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու, նրա հետ համատեղ ապրող ծնողը, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակը հարկային տարվա գույքի ու եկամուտների վերաբերյալ հայտարարագիրը լիազոր մարմին է ներկայացվում յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ ոչ ուշ, քան տվյալ տարվան հաջորդող տարվա փետրվարի 15-ը:

28. Բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսինը, նրա հետ համատեղ ապրող ծնողը, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակը հարկային տարվա գույքի ու եկամուտների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնում են բարձրաստիճան պաշտոնատար անձի հարկային տարվա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրի հետ միասին՝ մեկ փաթեթով:

29. Հայտարարագիրը «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ԼՂՀ օրենքով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքում, բարձրաստիճան պաշտոնատար անձինք կրում են պատասխանատվություն օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԱՂՅՈՒՍԱԿ 1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հ/Հ	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏԵՍԱԿԸ
1	Հողամաս
2	Ընդերքի մաս
3	Մեկուսի ջրային օբյեկտ
4	Անտառ
5	Բազմամյա տնկի
6	Շենքը, շինությունը, այդ թվում
6.1	Անհատական բնակելի տունը՝ հողամասի վրա կառուցված, իր տնտեսական շինություններով կառույցը,
6.2	Բնակարանը՝ բազմաբնակարան բնակելի շենքում ֆիզիկական անձանց բնակության համար նախատեսված, իրավունքների պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմնում առանձին ծածկագրով գրանցված և համարակալված տարածքը,
6.3	Այգետնակը (ամառանոցը)՝ այգեգործական զանգվածում հողամասի վրա կառուցված ամառանոցային շինությունը
6.4	Բազմաբնակարան բնակելի շենքը՝ մեկից ավելի բնակարաններ, ոչ բնակելի և ընդհանուր օգտագործման տարածքներ ունեցող շինությունը.

6.5	Քաղմաքնակարան շենքի ոչ բնակելի տարածքը (քաղմաքնակարան շենքում բնակարան, հասարակական, արտադրական նշանակության շինություն չհամարվող, իրավունքների պետական գրանցումն իրականացնող լիազորված մարմնում առանձին ծածկագրով գրանցված և համարակալված տարածքը)
6.6	Ավտոտնակը (տրանսպորտային միջոցների կայանման համար հողամասի վրա կառուցված առանձին շինությունը)
6.7	Հասարակական նշանակության շինությունը (բնակչության սոցիալական սպասարկման, ինչպես նաև վարչական ու հասարակական կազմակերպությունների տեղակայման համար նախատեսված շինությունը)
6.8	Արտադրական նշանակության շինությունը (արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրությունների տեղակայման և նրանց մեջ տեխնոլոգիական սարքավորումների շահագործման համար անհրաժեշտ պայմաններն ապահովող շինությունը)
6.9	Անավարտ (կիսակառույց) շինությունները (ԼՂՀ կառավարության սահմանած կարգով բնութագրվող)
6.10	ԼՂՀ օրենսդրության համաձայն նոր կառուցված, ձեռք բերված և անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնի կողմից հաշվառված ու գնահատված այն շինությունները, որոնք դեռևս չեն ստացել իրավունքների պետական գրանցում, ինչպես նաև սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա ինքնակամ կառուցված շենքերը և շինությունները, այդ թվում՝ քաղմաքնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցները:
7	Հողին ամրակայված այլ անշարժ գույք

ԱՂՅՈՒՍԱԿ 2. ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հ/Հ	ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ
1	Ավտոմոբիլային տրանսպորտի միջոց, որի շարժիչի աշխատանքային ծավալը գերազանցում է 50 խոր. սանտիմետրը, իսկ առավելագույն արագությունը գերազանցում է 50 կմ/ժամը, այդ թվում
	ա) Բեռնատար (բեռնաուղևորատար) ավտոմոբիլային տրանսպորտի միջոց,
	բ) Մարդատար ավտոմոբիլային տրանսպորտի միջոց
2	Անվավոր մեքենա կամ մեխանիզմ
3	Թրթուրավոր մեքենա կամ մեխանիզմ
4	Ինքնագնաց մեքենա կամ մեխանիզմ
5	Տարբեր բեռնատարողությամբ կցորդ
6	Տարբեր բեռնատարողությամբ կիսակցորդ
7	Օդային փոխադրամիջոց

8	Ջրային փոխադրամիջոց
9	Ձյունագնաց
10	Մոտոամենագնաց (քվադրոցիկլը)
11	Մոտոցիկլետ
12	Այլ ավտոմոբիլային տրանսպորտային միջոց

ԱՂՅՈՒՍԱԿ 3. ԱՐԺԵԹՂԹԻ ԿԱՄ ԱՅԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հ/Հ	ԱՐԺԵԹՂԹԻ ԿԱՄ ԱՅԼ ՆԵՐԴՐՄԱՆ ՏԵՍԱԿԸ
1	Բաժնային արժեթղթեր են համարվում
1.1	Բաժնետոմսը, բաժնետոմսերով ամրագրված իրավունքներին համարժեք իրավունքներ տվող այլ արժեթուղթը,
1.2	Բաժնետոմսը, 1-ին կետով սահմանված արժեթղթերի վրա հիմնված ղեպոզիտար ստացականը (ղեպոզիտար ստացական է համարվում օտարերկրյա թողարկողի բաժնետոմսերի, բաժնետոմսերով ամրագրված իրավունքներին համարժեք իրավունքներ տվող այլ փաստաթղթերի, պարտատոմսերի կամ պարտքային այլ արժեթղթերի հիման վրա թողարկված այն արժեթուղթը, որը դրա սեփականատիրոջն իրավունք է տալիս իրականացնել դրա հիմքում ընկած արժեթղթերով ամրագրված իրավունքները),
1.3	Ցանկացած այլ արժեթուղթ, որն իրավունք է տալիս ձեռք բերել 1-ին կետով սահմանված արժեթղթերը փոխարկման, փոխանակման կամ այլ իրավունքների իրականացման եղանակով և թողարկվել է սույն կետի 1-ին ենթակետով սահմանված արժեթղթերի թողարկողի կամ նրանց խմբի անդամ թողարկողի կողմից,
1.4	Ներդրումային ֆոնդերի փայերը (բաժնետոմսերը):
2	Պարտքային արժեթղթեր են համարվում՝
2.1	Պարտատոմսերը,
2.2	«Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով և «ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքով» սահմանված պարտքային այլ արժեթղթերը, այդ թվում՝ դրամական շուկայի գործիքներ (դրամական շուկայի գործիքները մինչև մեկ տարի մարման ժամկետ ունեցող պարտքային արժեթղթերն են, այդ թվում՝ կարճաժամկետ պարտատոմսերը և այլ կարճաժամկետ պարտքային արժեթղթերը):
3	Վճարային արժեթղթեր են համարվում չեկը, հասարակ մուրհակը և «ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքով» սահմանված այլ վճարային արժեթղթեր:
4	Այլ ներդրումները

ԱՂՅՈՒՍԱԿ 4. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հ/Հ	ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ
-----	----------------------

1	Աշխատանքի վարձատրություն և/կամ/ դրան հավասարեցված այլ վճարումներ
2	Գրականության, արվեստի կամ գիտական աշխատանքի օգտագործման կամ օգտվելու իրավունքի համար ցանկացած հեղինակային իրավունքից, ցանկացած արտոնագրից, ապրանքային նշանից, նախագծից կամ մոդելից, պլանից, գաղտնի բանաձևից կամ գործընթացից, էլեկտրոնային հաշվողական մեքենաների և տվյալների բազայի համար ծրագրերի կամ արդյունաբերական, առևտրային, գիտական սարքավորումներ օգտագործելու կամ օգտվելու համար իրավունքի կամ արդյունաբերական, տեխնիկական, կազմակերպական, առևտրային, գիտական փորձի վերաբերյալ տեղեկություն տրամադրելու համար ստացվող հատուցումը (ռոյալթի) և հեղինակային վարձատրությունը
3	Ստացված փոխառությունները (վարկերը)
4	Տրված փոխառություններից (վարկերից) ստացված տոկոսը և այլ հատուցումը
5	Շահաբաժիններ
6	Խաղատներում կամ շահումներով խաղերում ստացած եկամուտները (շահումները)
7	Մրցույթների կամ մրցությունների, ինչպես նաև վիճակախաղերի իրային կամ դրամական շահումները (մրցանակները)։
8	Նվիրատվության կամ օգնության կարգով ստացված գույքը, դրամական միջոցները (բացառությամբ աշխատանքի, ծառայության տեսքով ստացած)
9	Ապահովագրական հատուցումները
10	Գույքը (բացառությամբ դրամական միջոցների) օտարելուց ստացված եկամուտը
11	Վարձակալության դիմաց ստացված վճարը կամ այլ հատուցումը
12	Քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացված եկամուտը
13	Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտը
14	Ժառանգության կարգով ստացված գույքը (այդ թվում՝ դրամական միջոցները)
15	Փոխառություններ (վարկեր)
16	Միանվագ վճարները
17	Գույքային իրավունքներից ստացված եկամուտը
18	Այլ եկամուտները

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Մ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված N 3
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն
առընթեր հարկային պետական ծառայության պետի
«30» մայիսի 2014թ.
N 87-Ա հրամանի

ՈՒՂԵՑՈՒՅՑ

**ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ԿԱՄ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՕՐԿԱ
ԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԿԱ ԳՈՒՅՔԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ
ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԼՐԱՑՄԱՆ**

ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԼՐԱՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Ընդհանուր դրույթներ

1. Սույն ուղեցույցը սահմանում է բարձրաստիճան պաշտոնատար անձի պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ պաշտոնական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրի (այսուհետ՝ Հայտարարագիր) լրացման նկատմամբ ներկայացվող պահանջները և ներկայացման կարգը:
2. Հայտարարագրի ներկայացման պարտականությունը բխում է «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ԼՂՀ օրենքի 3-րդ և 4-րդ հոդվածների պահանջներից:
3. Հայտարարագիրը ներկայացնում են 2014թ. հունվարի 1-ից հետո պաշտոնական պարտականությունները ստանձնած կամ դադարեցրած՝ «Հանրային ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով սահմանված հետևյալ բարձրաստիճան պաշտոնատար անձինք՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահը, վարչապետը, փոխվարչապետը, Ազգային ժողովի պատգամավորները, դատավորները, նախարարները և նրանց տեղակալները, գլխավոր դատախազը և նրա տեղակալները, շրջանների և Ստեփանակերտ քաղաքի դատախազները, օրենքներով ստեղծված պետական

մարմինների ղեկավարները, նրանց տեղակալները և այդ մարմինների անդամները, կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների ղեկավարները, նրանց տեղակալները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի գլխավոր հարկադիր կատարողը և նրա տեղակալները, վերահսկիչ պալատի նախագահը, նրա տեղակալը, խորհրդի անդամները, մարդու իրավունքների պաշտպանը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարը և նրա տեղակալները, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը, կառավարության աշխատակազմի ղեկավարը և նրա տեղակալները, Ստեփանակերտի քաղաքապետը և նրա տեղակալները, շրջանների վարչակազմերի ղեկավարները և նրանց տեղակալները, օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարները, անվտանգության խորհրդի քարտուղարը և նրա տեղակալները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի խորհրդականները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի հատուկ հանձնարարությունների գծով ներկայացուցիչները, խորհրդատուն և օգնականները, Ազգային ժողովի նախագահի խորհրդականները և օգնականները, վարչապետի խորհրդականները և օգնականները, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայության ղեկավարը, վարչապետի վերահսկողական ծառայության ղեկավարը, Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչը:

4. Հայտարարագիրը լրացվում է ԼՂՀ կառավարության 2014 թվականի մայիսի 22-ի N 314-Ն որոշման պահանջներին համապատասխան:
5. Հայտարարագիրը լրացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել բարձրաստիճան պաշտոնատար անձանց պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ պաշտոնական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց սույն ուղեցույցով,
6. Բարձրաստիճան պաշտոնատար անձի պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ պաշտոնական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագիրը լրացնելիս անհրաժեշտ է նշել այն հարկային տարվա տարեթիվը, որի դրությամբ լրացվում է գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագիրը:

Բարձրաստիճան պաշտոնատար անձի տվյալները

Հայտարարագրի «Բարձրաստիճան պաշտոնատար անձի տվյալները» աղյուսակի՝

- **«Հայտարարատուի ազգանունը, անունը, հայրանունը»** տողում լրացվում են հայտարարատուի ազգանունը, անունը, հայրանունը՝ ըստ անձնագրի:
- **«Զբաղեցրած պաշտոնը»** տողում լրացվում է համապատասխան իրավական ակտով սահմանված պաշտոնի ամբողջական անվանումը՝ ներառելով պետական մարմնի անվանումը:
- **«Պաշտոնը ստանձնելու (դադարեցնելու) ամսաթիվը»** տողում նշվում է այն ամսաթիվը, երբ բարձրաստիճան պաշտոնատար անձը ստանձնել կամ դադարեցրել է իր

պաշտոնական պարտականությունները:

- **«Անձնագրի սերիան, համարը, տրման ամսաթիվը, ում կողմից է տրված»** տողում լրացվում են հայտարարատուի անձնագրի պահանջվող տվյալները:
- **«Հաշվառման հասցեն»** տողում լրացվում է հայտարարատուի հաշվառման հասցեն ըստ անձնագրում կատարված համապատասխան գրառման:
- **«Բնակության հասցեն»** տողում լրացվում է հայտարարատուի հիմնական բնակության հասցեն՝ հաշվառման հասցեից տարբերվելու դեպքում:
- Հասցեն լրացնելիս անհրաժեշտ է նշել երկիրը, շրջանը, մարզը, նահանգը կամ այլ վարչատարածքային միավորը, քաղաքը, համայքը (գյուղը կամ այլ բնակավայրը), փոստային ինդեքսը, փողոցը, տունը, շենքը և բնակարանը:
- **«Հեռախոսահամարները, էլեկտրոնային փոստի հասցեն»** տողում լրացվում են հայտարարատուի այն հեռախոսների կոդերը և համարները, (աշխատանքային, ծառայողական), ինչպես նաև էլ-փոստի հասցեն, որոնցով հնարավոր է կապ հաստատել հայտարարատուի հետ:
- **«Հայտարարագիրը ներկայացնելու օրը, ամիսը, տարեթիվը»** վանդակները լրացվում են՝ հայտարարագրի ներկայացման ամսաթվին համապատասխան:

Բաժին Ա. Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձինք

Հայտարարագրի այս բաժնում լրացվում են բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ տվյալները: Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձանց շրջանակը ներառում է «Հանրային ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով սահմանված, բարձրաստիճան պաշտոնատար անձի կամ նրա ամուսնու հետ՝ ներառյալ մինչև 2-րդ աստիճանի արյունակցական կապի մեջ գտնվող փոխկապակցված անձանց:

1. «Ա1. Բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսինը, նրա հետ համատեղ ապրող ծնողը, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակները» աղյուսակի՝

- **«Ազգանունը, անունը, հայրանունը»** սյունակի համապատասխան տողերում լրացվում է բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու, նրա հետ համատեղ ապրող ծնողի, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակի ազգանունը, անունը, հայրանունը:
- **«Ծննդյան տարեթիվը»** սյունակի համապատասխան տողերում լրացվում է բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու, նրա հետ համատեղ ապրող ծնողի, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակի ծննդյան օրը, ամիսը և տարեթիվը:

2. «Ա2. Բարձրաստիճան պաշտոնատար անձի կամ նրա ամուսնու հետ՝ ներառյալ մինչև 2-րդ աստիճանի արյունակցական կապի մեջ գտնվող պաշտոն զբաղեցնող փոխկապակցված անձինք» աղյուսակը լրացվում է «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ԼՂՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան: Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված և պաշտոն զբաղեցնող անձանց ցանկը տրված է Աղյուսակ 1-ում: Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված և պաշտոն զբաղեցնող անձանց ցանկը չի ներառում համապատասխան մարմնում տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնները: Տեխնիկական

սպասարկում իրականացնող անձանց ցանկը սահմանվում է համապատասխան մարմնի հաստիքացուցակով:

- «Ա2. Բարձրաստիճան պաշտոնատար անձի կամ նրա ամուսնու հետ՝ ներառյալ մինչև 2-րդ աստիճանի արյունակցական կապի մեջ գտնվող պաշտոն զբաղեցնող փոխկապակցված անձինք» աղյուսակի՝
- «Զբաղեցրած պաշտոնը» **սյունակի** վանդակներում նշվում է բարձրաստիճան պաշտոնատար անձի կամ նրա ամուսնու հետ՝ ներառյալ մինչև 2-րդ աստիճանի արյունակցական կապի մեջ գտնվող ազգակցի պաշտոնի անվանումը, որը համապատասխանում է Աղյուսակ 1-ում նշված պաշտոնյաների համար սահմանված ցանկին:
- «Կազմակերպությունը» վանդակում անհրաժեշտ է նշել այն պետական մարմնի անվանումը, ինչպես նաև պետական մարմնի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը, որտեղ նա պաշտոն է զբաղեցնում:
- **Նախարարների և նրանց տեղակալների համար «նախարարության համակարգի պաշտոնները»** ներառում են նախարարի, նախարարի տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարի, օգնականների և ռեֆերենտների, նախարարության աշխատակազմի, տարածքային ստորաբաժանումների, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմինների, նախարարության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև նախարարության կազմում գործող պետական հիմնարկների պաշտոնները:
- **Օրենքով ստեղծված կոլեգիալ պետական մարմնի կողմից կարգավորվող ոլորտում գործող առևտրային կազմակերպությունների ղեկավար պաշտոններ** են համարվում առևտրային կազմակերպության գործադիր մարմնի անդամների, ինչպես նաև առևտրային կազմակերպության խորհրդի անդամների պաշտոնները:
- «Ազգակցական կապը» սյունակում նշվում է բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ ունեցած ազգակցական կապը: Բարձրաստիճան պաշտոնատար անձի և նրա ամուսնու արյունակցական կապի 1-ին աստիճանի փոխկապակցված անձինք են զավակները, ծնողները, քույրերը և եղբայրները: Բարձրաստիճան պաշտոնատար անձի և նրա ամուսնու հետ արյունակցական կապի մինչև 2-րդ աստիճանի մեջ գտնվող փոխկապակցված անձինք են բարձրաստիճան պաշտոնատար անձի և նրա ամուսնու թոռները, հորեղբայրները, հորաքույրերը, մորաքույրերը, մորեղբայրները, քրոջ զավակները, եղբոր զավակները:
- «Ազգանունը, անունը, հայրանունը» սյունակում համապատասխանաբար նշվում է բարձրաստիճան պաշտոնատար անձի ազգակցի ազգանունը, անունը և հայրանունը:
 - Եթե բարձրաստիճան պաշտոնատար անձը կորցրել է կապը որևէ փոխկապակցված անձի հետ և տեղեկատվության բացակայության պատճառով ի վիճակի չէ հայտարարագրելու նրանց որպես փոխկապակցված անձ, ապա նա հայտարարագրի սույն աղյուսակի «Ազգակցական կապը» և «Ազգանունը, անունը, հայրանունը» սյունակներում նշում է փոխկապակցված անձի ազգակցական կապը և անձի անունը, հայրանունը, ազգանունը՝ դատարկ թողնելով «Զբաղեցրած պաշտոնը» սյունակի համապատասխան վանդակը:

Բաժին 2. Բարձրաստիճան պաշտոնատար անձի առկա անշարժ գույքը պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ

3. Հայտարարագրի «2. Բարձրաստիճան պաշտոնատար անձի առկա անշարժ գույքը պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ» բաժնում ներկայացվում է բարձրաստիճան պաշտոնատար անձին ԼՂՀ-ում և արտերկրում սեփականության իրավունքով պատկանող առկա գույքի վերաբերյալ տվյալներ:

4. Հայտարարագրի «2. Բարձրաստիճան պաշտոնատար անձի առկա անշարժ գույքը պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ» աղյուսակի՝

- «Անշարժ գույքի տեսակը» սյունակի համապատասխան տողում լրացվում է բարձրաստիճան պաշտոնատար անձին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը՝ հողամասը, ընդերքի մասը, մեկուսի ջրային օբյեկտը, անտառը, բազմամյա տնկին, շենքը, շինությունը, հողին ամրակալված այլ գույքը՝ համաձայն կից Աղյուսակ 2-ի:

Անշարժ գույքի ամեն մի տեսակի համար, լրացվում է անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականով սահմանված գույքային միավորը:

Ընդհանուր համատեղ կամ բաժնային սեփականության իրավունքով պատկանող գույք ունենալու դեպքում՝ բարձրաստիճան պաշտոնատար անձը «Անշարժ գույքի տեսակը» սյունակի համապատասխան տողում փակագծերում նշում է նաև «համատեղ սեփականություն» կամ «բաժնային սեփականություն» բառերը:

- «Գտնվելու վայրի հասցեն» սյունակի համապատասխան տողում լրացվում է հայտարարագրման ենթակա անշարժ գույքի լրիվ հասցեն:

Հասցեն լրացնելիս անհրաժեշտ է նշել անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականում նշված հասցեն:

Բաժին 3. Բարձրաստիճան պաշտոնատար անձի առկա շարժական գույքը պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ

Հայտարարագրի «3. Բարձրաստիճան պաշտոնատար անձի առկա շարժական գույքը պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ» աղյուսակի՝

- «Շարժական գույքի տեսակը» սյունակի յուրաքանչյուր տողում լրացվում է բարձրաստիճան պաշտոնատար անձին սեփականության իրավունքով պատկանող շարժական գույքի տեսակը՝ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը, անիվավոր, թրթուրավոր, ինքնագնաց մեքենան կամ մեխանիզմը, օդային, ջրային փոխադրամիջոցը՝ համաձայն կից Աղյուսակ 3-ի:

Ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների շարքին են դասվում այն տրանսպորտային միջոցները, որոնց շարժիչների աշխատանքային ծավալը գերազանցում է 50 խոր. սանտիմետրը, իսկ առավելագույն արագությունը գերազանցում է 50 կմ/ժամը, ինչպես նաև տարբեր բեռնատարողությամբ կցորդները կամ կիսակցորդները:

- **«Սերիան, մակնիշը»** սյունակի համապատասխան տողերում լրացվում է հայտարարագրման ենթակա շարժական գույքի սերիան և մակնիշը, այդ թվում՝ թողարկման տարեթիվը: Մակնիշը և սերիան լրացվում է շարժական գույքի տեխնիկական փաստաթղթերում արտացոլված լեզվով:

Բաժին 4. Բարձրաստիճան պաշտոնատար անձի առկա արժեթղթերը և այլ ներդրումները պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ

5. Հայտարարագրի «4. Բարձրաստիճան պաշտոնատար անձի առկա արժեթղթերը և այլ ներդրումները պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ» աղյուսակի՝

- **«Արժեթղթի կամ այլ ներդրման տեսակը»** սյունակի յուրաքանչյուր տողում լրացվում է բարձրաստիճան պաշտոնատար անձին սեփականության իրավունքով պատկանող արժեթղթի տեսակը (պարտատոմսը, չեկը, մուրհակը, բաժնետոմսը և Հայաստանի Հանրապետության օրենքներով արժեթղթերի թվին դասվող այլ փաստաթուղթը, բացառությամբ բանկային վկայագրի) և (կամ) այլ ներդրումը հավաստող փաստաթուղթը (բաժնեմասը, փայաբաժինը)՝ համաձայն կից Աղյուսակ 4-ի: Սյունակի յուրաքանչյուր տողում փակագծերում նշվում է նաև համապատասխան արժեթուղթը թողարկողի անվանումը կամ ազգանունը, անունը, հայրանունը, ինչպես նաև արժեթղթի ծածկագիրը (առկայության դեպքում): Օտարերկրյա արժեթղթերի դեպքում ավելացվում է նաև «օտարերկրյա» բառը:
- **«Արժեքը (գինը)»** սյունակի համապատասխան տողերում լրացվում է արժեթղթերի գումարային արժեքը՝ հաշվարկված ներքոշարադրյալ սկզբունքով.
- **Բաժնային արժեթղթերի դեպքում** եթե տվյալ բաժնային արժեթուղթը թույլատրված է կարգավորվող շուկայում առևտրին (ցուցակված է բորսայում) և տվյալ բաժնային արժեթղթով գործարք է կնքվել նախորդող 6 ամսվա ընթացքում, ապա սույն սյունակում լրացվում է կարգավորվող շուկայի (բորսայի) կողմից հրապարակված տվյալ արժեթղթով վերջին գործարքի հիմքում ընկած միավոր արժեթղթի գինը՝ բազմապատկած արժեթղթերի քանակով: Հակառակ դեպքում նշվում է բաժնային արժեթղթի անվանական արժեքը՝ բազմապատկած արժեթղթերի քանակով:
- **Պարտքային արժեթղթերի դեպքում՝** պարտքային արժեթղթերի մնացորդային գումարը:
- **Վճարային արժեթղթերի դեպքում՝** նշվում է տվյալ վճարային արժեթղթի մնացորդային գումարը (առկայության դեպքում):
- **«Արժույթը»** սյունակի համապատասխան տողում նշվում է արժույթի անվանումը:

Բաժին 5. Բարձրաստիճան պաշտոնատար անձի հանձնված կամ բարձրաստիճան պաշտոնատար անձին վերադարձված փոխառությունը պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ

Հայտարարագրում «Հանձնված կամ վերադարձված փոխառություն» է համարվում հայտարարատոմսի կողմից այլ սուբյեկտի սեփականությանը դրամի (փոխառության գումարի) կամ այլ գույքի հանձնումը՝ միևնույն գումարի դրամ կամ ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք վերադարձնելու պայմանով:

6. Հայտարարագրի «Բ5. Բարձրաստիճան պաշտոնատար անձի հանձնված կամ Բարձրաստիճան պաշտոնատար անձին վերադարձված փոխառությունը պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ» աղյուսակի՝

- «Պարտապանի անվանումը կամ ազգանունը, անունը և հայրանունը»

սյունակի համապատասխան տողում լրացվում է փոխառություն ստացած կամ վերադարձրած պարտապանի անվանումը, եթե այն իրավաբանական անձ է կամ ազգանունը, անունը և հայրանունը, եթե պարտապանը ֆիզիկական անձ է:

- «Պարտապանի հասցեն» սյունակի համապատասխան տողում լրացվում է հայտարարատուի կողմից փոխառություն ստացած կամ վերադարձրած պարտապանների հասցեն՝ իրավաբանական անձի դեպքում՝ գտնվելու վայրը, իսկ ֆիզիկական անձանց դեպքում՝ բնակության վայրի հասցեն:

Հասցեն լրացնելիս անհրաժեշտ է նշել երկիրը, շրջանը, մարզը, նահանգը (այլ վարչատարածքային միավորը), քաղաքը, համայնքը (գյուղը կամ այլ բնակավայրը), փողոցը, տունը, շենքը և բնակարանը:

- «Արժույթը» սյունակի համապատասխան տողում նշվում է արժույթի անվանումը:
- «Գումարը (չափը)» սյունակի յուրաքանչյուր տողում լրացվում է հայտարարատուի առկա փոխառությունների գումարի չափը:

Բաժին 6. Բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվան նախորդող հարկային տարվա ընթացքում, ինչպես նաև պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրը ձեռք բերված և օտարված սույն աղյուսակի 2-5-րդ կետերում չնշված 8 000 000 ՀՀ դրամը գերազանցող կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող ցանկացած գույք (թանկարժեք գույքը)

7. Հայտարարագրի «6. Բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվան նախորդող հարկային տարվա ընթացքում, ինչպես նաև պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրը ձեռք բերված և օտարված սույն աղյուսակի 2-5-րդ կետերում չնշված 8 000 000 ՀՀ դրամը գերազանցող կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող ցանկացած գույք (թանկարժեք գույքը)» աղյուսակի՝

- «Գույքի անվանումը» սյունակի համապատասխան տողում լրացվում է բարձրաստիճան պաշտոնատար անձին սեփականության իրավունքով պատկանող, հայտարարագրի 2-5-րդ կետերում չնշված 8 000 000 ՀՀ դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող ցանկացած այն գույքի համառոտ հատկանիշները, որն օտարվել կամ ձեռք է բերվել բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվան նախորդող հարկային տարվա ընթացքում, ինչպես նաև պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնական պարտականությունները

ստանձնելու կամ դադարեցնելու օրը:

- **«Համառոտ հատկանիշները»** սյունակի համապատասխան տողերում նշվում են թանկարժեք գույքի հիմնական բնութագրիչները:
- **«Ձեռք է բերվել»** սյունակի **«գինը (արժեքը)»** հատվածի համապատասխան տողում նշվում է տվյալ բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվան նախորդող հարկային տարվա ընթացքում, ինչպես նաև պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրը ձեռք բերված յուրաքանչյուր միավոր թանկարժեք գույքի արժեքը՝ ըստ թանկարժեք գույքի ձեռքբերման պայմանագրում արտացոլված գնի:
- **«արժույթը»** սյունակի համապատասխան տողում նշվում է արժույթի անվանումը:
- **«Օտարվել է»** սյունակի **«գինը (արժեքը)»** հատվածի համապատասխան տողում նշվում է բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվան նախորդող հարկային տարվա ընթացքում, ինչպես նաև պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրը օտարված թանկարժեք գույքի արժեքը՝ ըստ թանկարժեք գույքի օտարման պայմանագրում արտացոլված գնի:

Բաժին 7. Բարձրաստիճան պաշտոնատար անձի առկա դրամական միջոցները

պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ

8. Հայտարարագրի «7. Բարձրաստիճան պաշտոնատար անձի առկա դրամական միջոցները՝ պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ» աղյուսակի՝

- **«Դրամական միջոցի արժույթը»** սյունակի համապատասխան տողում նշվում է արժույթի անվանումը:
- **«Դրամական միջոցների չափը (գումարը)»** սյունակի համապատասխան տողերում լրացվում է նշված արժույթով առկա դրամական միջոցի (այդ թվում բանկում ունեցած) մեծությունը:

Բաժին 8. Բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվան նախորդող հարկային տարվա ընթացքում, ինչպես նաև պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրը ստացված եկամուտները

9. Հայտարարագրի «8. Բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվան նախորդող հարկային տարվա ընթացքում, ինչպես նաև պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրը ստացված եկամուտները» բաժնում ներկայացվում են բարձրաստիճան պաշտոնատար անձի պաշտոնական պարտականությունները ստանձնելու

կամ դադարեցնելու տարվան նախորդող հարկային տարվա ընթացքում, ինչպես նաև պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրը ԼՂՀ-ում և արտերկրում ստացած՝ «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ԼՂՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված եկամուտների տեսակները և դրանց ստացման աղբյուրները:

10. Ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով գույքի օտարումից կամ օգտագործումից ստացված ամբողջ եկամտից՝ բարձրաստիճան պաշտոնատար անձը հայտարարագրում արտացոլում է պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվան նախորդող հարկային տարվա ընթացքում, ինչպես նաև պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրը իր կողմից փաստացի ստացած մասը:

- **«Եկամտի տեսակը»** սյունակի համապատասխան տողում լրացվում են բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվան նախորդող հարկային տարվա ընթացքում, ինչպես նաև պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրը Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով և (կամ) բնամթերային (ոչ դրամական ձևով) վճարված համապատասխան եկամտի տեսակները՝ համաձայն Աղուսակ 5-ի:
- **«Եկամուտ վճարող կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը և հայրանունը»** սյունակի համապատասխան տողում լրացվում է **Եկամուտ վճարող կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը և հայրանունը:**
- **«Եկամուտ վճարողի հասցեն»** սյունակի համապատասխան տողում լրացվում է Եկամուտ վճարող կազմակերպության գտնվելու վայրի կամ ֆիզիկական անձի բնակության վայրի լրիվ հասցեն:
- Հասցեն լրացնելիս անհրաժեշտ է նշել երկիրը, շրջանը, մարզը, նահանգը (այլ վարչատարածքային միավորը), քաղաքը, համայնքը (գյուղը կամ այլ բնակավայրը), փողոցը, տունը, շենքը և բնակարանը:
- **«Արժույթը»** սյունակի համապատասխան տողում նշվում է արժույթի անվանումը:
- **«Եկամուտների չափը»** սյունակի համապատասխան տողում լրացվում է Եկամուտ վճարողի կողմից հայտարարատուփն վճարված եկամտի առձեռն կամ նրա հաշվին փոխանցված գումարի մեծությունը: Օրենքով սահմանված դեպքերում, հարկերը կամ պարտադիր վճարները եկամուտ վճարողի կողմից պահված լինելու դեպքում՝ նշվող գումարի չափը չի ներառում պահված հարկերը և պարտադիր վճարները: Այն դեպքում, երբ եկամուտ վճարողը հարկի կամ պարտադիր վճարի պահում չի կատարել՝ սյունակի համապատասխան տողում նշվում է ստացած ամբողջ գումարը:
- **«« դրամով»** սյունակի համապատասխան տողում լրացվում է բարձրաստիճան

պաշտոնատար անձի՝ պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվան նախորդող հարկային տարվա ընթացքում, ինչպես նաև պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրը վճարված եկամտի գումարը՝ « դրամով:

- «**արտարժույթով**» սյունակի համապատասխան տողում լրացվում է բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնական արտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվան նախորդող հարկային տարվա ընթացքում, ինչպես նաև պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրը վճարված եկամտի գումարը՝ համապատասխան արտարժույթով:
- «**բնամթերքով**» սյունակի համապատասխան տողերում լրացվում է նվիրատվության կամ ժառանգության կարգով, ինչպես նաև վիճակախաղերի իրային շահումների (մրցանակների) տեսքով ստացված բնամթերային (ոչ դրամական ձևով) եկամտի չափը՝ բարձրաստիճան պաշտոնատար անձի պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվան նախորդող հարկային տարվա ընթացքում, ինչպես նաև պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ, որը արտացոլվում է << դրամով՝ բնամթերային (ոչ դրամական ձևով) եկամտի հաշվարկման ներքոշարադրյալ մեթոդներով:
- Բնամթերային (ոչ դրամական ձևով) եկամուտը կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից ստանալու դեպքում հայտարարագրում դրանք արտացոլվում են կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից եկամտի վճարման կամ նշված եկամտի պահանջի իրավունքի մարման ամսում (անհնարինության դեպքում նախորդող ամսում) **այլ անձանց՝ դրանց իրացման միջին գներով**, իսկ այդպիսի գների բացակայության դեպքում՝ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ մոտ դրանց ինքնարժեքի (կամ ձեռքբերման արժեքի) և դրա նկատմամբ օրենքով սահմանված դեպքերում անուղղակի հարկերի հանրագումարով:
- Բնամթերային եկամուտը այլ աղբյուրներից ստանալու դեպքում՝ հայտարարագրում դրանք հաշվի է առնվում և արտացոլվում է նույնանման գործարքների համար եկամտի ստացման կամ նշված եկամտի պահանջի իրավունքի մարման ամսվա **հրապարակված վիճակագրական գներով** (անհնարինության դեպքում նախորդող ամսվա հրապարակված վիճակագրական միջին գներ), իսկ դրանց բացակայության դեպքում՝ այդպիսի կամ նույնանման գործարքների համար եկամտի ստացմանը կամ նշված եկամտի պահանջի իրավունքի մարմանը նախորդող 12 ամսվան վերաբերող հրապարակված վիճակագրական միջին գները (սակագները):
- Վիճակագրական միջին գնի բացակայության դեպքում բնամթերային եկամուտը կամ բնամթերքով պահանջի իրավունքը հայտարարագրում արտացոլվում է **եկամտի ստացման կամ պահանջի իրավունքի առաջացման տարում այն ձեռք բերելու գնով**, որը նման հանգամանքներում սովորաբար գանձվում է նույնանման ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար: Այդ նպատակով կարող են կիրառվել առքուվաճառքով

զբաղվող սուբյեկտների (բրոքերների, մասնագիտացված խանութների, բորսաների, մասնագիտացված տոնավաճառների, շուկաների և այլն) գները (սակագները), գնացուցակային (կատալոգային) գները, այդ թվում՝ նաև համապատասխան դեպքերում համացանցի միջոցով ստացված տվյալները, ինչպես նաև նույնանման գույքի աճուրդային կարգով իրացման ձևավորված նախադեպային տվյալները:

- «Ընդամենը» տողի և «Եկամուտների չափը», «ՀՀ դրամով», «արտարժույթով» և «բնամթերքով» սյունակների հատման համապատասխան վանդակներում լրացվում է ստացված եկամուտների տեսակների հանրագումարը:
- «արտարժույթով» եկամտի հանրագումարը չի հաշվարկվում:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Բարձրաստիճան պաշտոնատար անձի պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ պաշտոնական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ բարձրաստիճան պաշտոնատար անձի հայտարարագիրը ներկայացվում է պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ պաշտոնական պարտականությունները դադարեցնելու օրերին հաջորդող 15 օրվա ընթացքում:

2. Հայտարարագիրը «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ԼՂՀ օրենքով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքում, բարձրաստիճան պաշտոնատար անձինք կրում են պատասխանատվություն օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԱՂՅՈՒՍԱԿ 1. ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ՀԵՏ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՑԱՆԿ

Հ/Հ	ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ	ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁ
1	Նախարարներ և նրանց տեղակալներ	Նախարարության համակարգում պաշտոն զբաղեցնող անձինք՝ «Նախարարության համակարգի պաշտոնները» ներառում են նախարարի, նախարարի տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարի, օգնականների և ռեֆերենտների, նախարարության աշխատակազմի, տարածքային ստորաբաժանումների, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմինների, նախարարության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև նախարարության կազմում գործող պետական հիմնարկների պաշտոնները: Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ պաշտոն զբաղեցնող փոխկապակցված անձանց ցանկը չի ներառում համապատասխան մարմնում տեխնիկական սպասարկում

		իրականացնող անձանց պաշտոնները: Տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց ցանկը սահմանվում է համապատասխան մարմնի հաստիքացուցակով
2	գլխավոր դատախազը և նրա տեղակալները, շրջանների և Ստեփանակերտ քաղաքի դատախազները,	դատախազի, դատավորի, քննիչի պաշտոն զբաղեցնող անձինք
3	կառավարությանն առընթեր պետական մարմինների ղեկավարներ և ղեկավարների տեղակալներ	ԼՂՀ ԿԱ մարմնում (ներառյալ կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներում, ինչպես նաև ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպություններում) պաշտոն զբաղեցնող անձինք:
4	օրենքներով ստեղծված կոլեգիալ պետական մարմինների ղեկավարներ և անդամներ	այդ մարմնի ղեկավարի և անդամի պաշտոն զբաղեցնող անձինք, ինչպես նաև այդ մարմնի կողմից կարգավորվող ոլորտում գործող առևտրային կազմակերպություններում ղեկավար պաշտոն զբաղեցնող անձինք: Առևտրային կազմակերպությունների ղեկավար պաշտոններ են համարվում առևտրային կազմակերպության գործադիր մարմնի անդամների, ինչպես նաև առևտրային կազմակերպության խորհրդի անդամների պաշտոնները:
5	դատավորներ	դատախազի, դատավորի, քննիչի պաշտոն զբաղեցնող անձինք

ԱՂՅՈՒՍԱԿ 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հ/Հ	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏԵՍԱԿԸ
1	Հողամաս
2	Ընդերքի մաս
3	Մեկուսի ջրային օբյեկտ
4	Անտառ
5	Բազմամյա տնկի
6	Շենքը, շինությունը, այդ թվում

6.1	Անհատական բնակելի տունը՝ հողամասի վրա կառուցված, իր տնտեսական շինություններով կառույցը,
6.2	Բնակարանը՝ բազմաբնակարան բնակելի շենքում ֆիզիկական անձանց բնակության համար նախատեսված, իրավունքների պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմնում առանձին ծածկագրով գրանցված և համարակալված տարածքը,
6.3	Այգետնակը (ամառանոցը)՝ այգեգործական զանգվածում հողամասի վրա կառուցված ամառանոցային շինությունը
6.4	Բազմաբնակարան բնակելի շենքը՝ մեկից ավելի բնակարաններ, ոչ բնակելի և ընդհանուր օգտագործման տարածքներ ունեցող շինությունը.
6.5	Բազմաբնակարան շենքի ոչ բնակելի տարածքը (բազմաբնակարան շենքում բնակարան, հասարակական, արտադրական նշանակության շինություն չհամարվող, իրավունքների պետական գրանցումն իրականացնող լիազորված մարմնում առանձին ծածկագրով գրանցված և համարակալված տարածքը
6.6	Ավտոտնակը (տրանսպորտային միջոցների կայանման համար հողամասի վրա կառուցված առանձին շինությունը)
6.7	Հասարակական նշանակության շինությունը (բնակչության սոցիալական սպասարկման, ինչպես նաև վարչական ու հասարակական կազմակերպությունների տեղակայման համար նախատեսված շինությունը)
6.8	Արտադրական նշանակության շինությունը (արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրությունների տեղակայման և նրանց մեջ տեխնոլոգիական սարքավորումների շահագործման համար անհրաժեշտ պայմաններն ապահովող շինությունը)
6.9	Անավարտ (կիսակառույց) շինությունները (ԼՂՀ կառավարության սահմանած կարգով բնութագրվող)
6.10	ԼՂՀ օրենսդրության համաձայն նոր կառուցված, ձեռք բերված և անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնի կողմից հաշվառված ու գնահատված այն շինությունները, որոնք դեռևս չեն ստացել իրավունքների պետական գրանցում, ինչպես նաև սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա ինքնակամ կառուցված շենքերը և շինությունները, այդ թվում՝ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցները:
7	Հողին ամրակայված այլ անշարժ գույք

ԱՂՅՈՒՍԱԿ 3. ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հ/Հ	ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ
1	Ավտոմոբիլային տրանսպորտի միջոց, որի շարժիչի աշխատանքային ծավալը գերազանցում է 50 խոր. սանտիմետրը, իսկ առավելագույն արագությունը գերազանցում է 50 կմ/ժամը, այդ թվում
	ա) Բեռնատար (բեռնաուղևորատար) ավտոմոբիլային տրանսպորտի միջոց,
	բ) Մարդատար ավտոմոբիլային տրանսպորտի միջոց
2	Անվավոր մեքենա կամ մեխանիզմ
3	Թրթուրավոր մեքենա կամ մեխանիզմ
4	Ինքնագնաց մեքենա կամ մեխանիզմ
5	Տարբեր բեռնատարողությամբ կցորդ
6	Տարբեր բեռնատարողությամբ կիսակցորդ
7	Օդային փոխադրամիջոց
8	Զրային փոխադրամիջոց
9	Ձյունագնաց
10	Մոտոամենագնաց (քվադրոցիկլը)
11	Մոտոցիկլետ
12	Այլ ավտոմոբիլային տրանսպորտային միջոց

ԱՂՅՈՒՍԱԿ 4. ԱՐԺԵԹՂԹԻ ԿԱՄ ԱՅԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հ/Հ	ԱՐԺԵԹՂԹԻ ԿԱՄ ԱՅԼ ՆԵՐԴՐՄԱՆ ՏԵՍԱԿԸ
1	Բաժնային արժեթղթեր են համարվում
1.1	Բաժնետոմսը, բաժնետոմսերով ամրագրված իրավունքներին համարժեք իրավունքներ տվող այլ արժեթուղթը,
1.2	Բաժնետոմսը, 1-ին կետով սահմանված արժեթղթերի վրա հիմնված ղեպոզիտար ստացականը (ղեպոզիտար ստացական է համարվում օտարերկրյա թողարկողի բաժնետոմսերի, բաժնետոմսերով ամրագրված իրավունքներին համարժեք իրավունքներ տվող այլ փաստաթղթերի, պարտատոմսերի կամ պարտքային այլ արժեթղթերի հիման վրա թողարկված այն արժեթուղթը, որը դրա սեփականատիրոջն իրավունք է տալիս իրականացնել դրա հիմքում ընկած արժեթղթերով ամրագրված իրավունքները),

1.3	Ցանկացած այլ արժեթուղթ, որն իրավունք է տալիս ձեռք բերել 1-ին կետով սահմանված արժեթղթերը փոխարկման, փոխանակման կամ այլ իրավունքների իրականացման եղանակով և թողարկվել է սույն կետի 1-ին ենթակետով սահմանված արժեթղթերի թողարկողի կամ նրանց խմբի անդամ թողարկողի կողմից,
1.4	Ներդրումային ֆոնդերի փայերը (բաժնետոմսերը):
2	Պարտքային արժեթղթեր են համարվում՝
2.1	Պարտատոմսերը,
2.2	«Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով և «ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքով» սահմանված պարտքային այլ արժեթղթերը, այդ թվում՝ դրամական շուկայի գործիքներ (դրամական շուկայի գործիքները մինչև մեկ տարի մարման ժամկետ ունեցող պարտքային արժեթղթերն են, այդ թվում՝ կարճաժամկետ պարտատոմսերը և այլ կարճաժամկետ պարտքային արժեթղթերը):
3	Վճարային արժեթղթեր են համարվում չեկը, հասարակ մուրհակը և «ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքով» սահմանված այլ վճարային արժեթղթեր:
4	Այլ ներդրումները

ԱՂՅՈՒՍԱԿ 5. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հ/Հ	ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ
1	Աշխատանքի վարձատրություն և/կամ/ դրան հավասարեցված այլ վճարումներ
2	Գրականության, արվեստի կամ գիտական աշխատանքի օգտագործման կամ օգտվելու իրավունքի համար ցանկացած հեղինակային իրավունքից, ցանկացած արտոնագրից, ապրանքային նշանից, նախագծից կամ մոդելից, պլանից, գաղտնի բանաձևից կամ գործընթացից, էլեկտրոնային հաշվողական մեքենաների և տվյալների բազայի համար ծրագրերի կամ արդյունաբերական, առևտրային, գիտական սարքավորումներ օգտագործելու կամ օգտվելու համար իրավունքի կամ արդյունաբերական, տեխնիկական, կազմակերպական, առևտրային, գիտական փորձի վերաբերյալ տեղեկություն տրամադրելու համար ստացվող հատուցումը (ռոյալթի) և հեղինակային վարձատրությունը
3	Ստացված փոխառությունները (վարկերը)
4	Տրված փոխառություններից (վարկերից) ստացված տոկոսը և այլ հատուցումը
5	Շահաբաժիններ
6	Խաղատներում կամ շահումներով խաղերում ստացած եկամուտները (շահումները)

7	Մրցույթների կամ մրցությունների, ինչպես նաև վիճակախաղերի իրային կամ դրամական շահումները (մրցանակները)։
8	Նվիրատվության կամ օգնության կարգով ստացված գույքը, դրամական միջոցները (բացառությամբ աշխատանքի, ծառայության տեսքով ստացած)
9	Ապահովագրական հատուցումները
10	Գույքը (բացառությամբ դրամական միջոցների) օտարելուց ստացված եկամուտը
11	Վարձակալության դիմաց ստացված վճարը կամ այլ հատուցումը
12	Քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացված եկամուտը
13	Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտը
14	Ժառանգության կարգով ստացված գույքը (այդ թվում՝ դրամական միջոցները)
15	Փոխառություններ (վարկեր)
16	Միանվագ վճարները
17	Գույքային իրավունքներից ստացված եկամուտը
18	Այլ եկամուտները

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Մ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ